

Հավելված
ՀՀ կառավարության
հունիսի 2009 թվականի N-Ն որոշման



ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ
ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՍՓՅՈՒՈՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ 1992-2008ԹԹ.

- 1.1. Հայկական Սփյուռք
- 1.2. Հայաստան-Սփյուռք գործակցության գնահատականը և բնագավառները
- 1.3. Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական արդյունքները
- 1.4. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության իրականացման իրավական հիմքերը

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012ԹԹ.

- 2.1. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման համակարգված քաղաքականությունը
- 2.2. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, նպատակները
- 2.3. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման գերակա ուղղություններն ու խնդիրները
- 2.4. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականություն իրականացնող մարմինները և գործակցության բնագավառները
- 2.5. Մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, Հայաստան-Սփյուռք գործակցության մասին տեղեկատվության կառավարումը

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԴԸ

- 3.1. ՀՀ քաղաքացիության տրամադրման, մուտքի-ելքի և կացության կարգավորում
- 3.2. Միջազգային իրավական գործիքների արդյունավետ կիրառումը
- 3.3. Օրենսդրական և միջխորհրդարանական գործունեություն
- 3.4. Հայաստան-Սփյուռք գործակցությանը քաղաքացիական հասարակության աջակցությունը
- 3.5. Հայագիտության զարգացումը

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

- 4.1. Արտաքին քաղաքականություն
- 4.2. Համայնքների գործակցություն
- 4.3. Գործարար հատված
- 4.4. Հոգևոր կյանք

ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՈՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով (NA)
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID)
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն (CIS)
ԱՊՀ ՄԽՎ	ԱՊՀ անդամ-պետությունների միջխորհրդարանական վեհաժողով (CISIPA)
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE)
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ (CoE)
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (PACE)
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ОДКБ-OSTO)
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (AGBU)
ՀԿ	Հասարակական կազմակերպություն (NGO)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն (RA)
ՀՅԴ	Հայ Յեղափոխական դաշնակցություն (ARF)
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP)
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
ՄՄ	Միջխորհրդարանական միություն (IPU)
ՌԱԿ	Ռամկավար-ազատական կուսակցություն (RLDP)
ՄԴՀԿ	Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն (SDHP)
ՄՕՏՀ ԽՎ	Սնծովյան տնտ. համագործակցության խորհրդարանական վեհաժողով (PABSEC)
ՔՔԻՄԴ	Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիր (IPCPR)
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (FDI)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) սահմանում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները: Պետական քաղաքականությունը Հայաստան-Սփյուռք գործակցության բնագավառում իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, դիվանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական, կազմակերպչական հարաբերությունների ամբողջություն, որն ուղղված է հայապահպանության խնդիրների լուծմանը, Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող հարցերում Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովմանը:
2. Հայաստան - Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունն իրականացվում է Հանրապետության Նախագահի ղեկավարությամբ՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կառույցների օժանդակությամբ:
3. Հայեցակարգում թվարկված են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության իրականացման համար պատասխանատու մարմինները, նրանց լիազորությունները, գործառույթները, ինչպես նաև այս ոլորտում պետական մարմինների գործունեության համակարգման և դրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման խնդիրները:
4. Հայեցակարգը սահմանում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հիմնական միջոցները, այս ոլորտում մասնագետների պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության մասին տեղեկատվության կառավարման խնդիրները: Հայեցակարգն ուղենշում է Սփյուռքի կազմակերպությունների հետ գործակցության սկզբունքներն ու մեխանիզմները, քաղաքացիական հասարակության դերը Հայաստան-Սփյուռք գործակցությունը զարգացնելու գործում:
5. Հայեցակարգը սահմանում է նաև հանրային կառավարման և տնտեսության առանձին ոլորտներում Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության առանձնահատկությունները և նախանշում այդ քաղաքականության ու համապետական ծրագրերի ներդաշնակեցման ուղիները: Հայեցակարգը սահմանում է Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականության իրականացման դիտարկման և գնահատման համակարգը:
6. Հայեցակարգը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի, միջազգային իրավունքի սկզբունքների, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վրա: Հայեցակարգը համահունչ է ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությանը, Հայաստանի Հանրապետության Նախագահի քաղաքական Ծրագրին, ՀՀ կառավարության ծրագրերին:
7. Հայեցակարգի հենքը՝ հայ ժողովրդի միասությունն է՝ հանուն համազգային խնդիրների ու առաջնահերթությունների՝ ի բարօրություն հայ մարդու, Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հզորացման, ազգային պետության կառուցման շուրջ աշխարհասփյուռ հայության համախմբման:
8. Հայեցակարգի մեջ առաջարկվող նոր կառույցները (Ազգային խորհուրդ, Սփյուռքը ներկայացնող կառույցի ձևավորում և այլն) կստեղծվեն աստիճանաբար, լայն խորհրդակցությունների միջոցով, որպեսզի կարողանան ծառայել իրենց նպատակին՝ առանց խոչընդոտելու մյուս կառույցների գործունեությանը:

ԳԼՈՒԽ 1.

ՄՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՄՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1992-2008 ԹԹ.

1.1. Հայկական Մփյուռքը

9. Մերօրյա Հայկական Մփյուռքն այսուհետ՝ Մփյուռք ընդգրկում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից դուրս հաստատված հայկական համայնքները: Աշխարհի տարբեր երկրներում ապրում են ավելի քան տասը միլիոն հայեր, որոնց շուրջ մեկ երրորդը բնակվում է Հայաստանում և ԼՂՀ-ում:
10. Մփյուռքի պատմությունը սկիզբ է առել դարերի խորքից՝ վաղ միջնադարից: Հայաստանից հայերի արտագաղթի և տարհանման հետևանքով հայկական համայնքներ են ձևավորվել բազմաթիվ երկրներում՝ հատկապես Եվրոպայի, Մերձավոր Արևելքի երկրներում ու Ամերիկայում: Հայերի արտագաղթը հայրենիքից պայմանավորվել է երեք հիմնական գործոններով՝ քաղաքական, տնտեսական և կրոնական:
11. 19-րդ դարի վերջին համիդյան ջարդերի (1894-1896թթ.), ապա 1915-1923 թթ Օսմանյան կայսրության իշխանությունների իրականացրած ցեղասպանության հետևանքով, երբ նահատակվեց շուրջ 1,5 մլն հայ, հարյուր հազարներն էլ տեղահանվեցին իրենց բնօրրանից, հայաշատ համայնքներ ձևավորվեցին կամ վերակազմավորվեցին Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում, Վրաստանում, Հունաստանում, Արգենտինայում և այլուր:
Հայկական մեծ համայնքներ կան Ռուսաստանում, Իրանում, Վրաստանում, Թուրքիայում: 1920-ական թվականներից Հայաստանից դուրս՝ տարբեր երկրներում համախումբ ապրող հայությունն անվանվեց «Հայկական Մփյուռքե (Armenian Diaspora):»
12. Երկրորդ աշխարհամարտի հետևանքով Մփյուռքը ձևափոխվեց և սկսվեց նոր զանգվածային շարժում՝ հայրենադարձություն: Խորհրդային իշխանությունները 1921-1937, ապա 1946-48թթ., 1960-ականներին կազմակերպեցին հայերի զանգվածային ներգաղթ Խորհրդային Հայաստան: Զուգահեռաբար 1950-70-ական թթ. համաշխարհային միգրացիոն գործընթացները ապա և 1988թ. Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած զանգվածային ջարդերի, սպանությունների ու հալածանքների հետևանքով տեղի ողջ հայ բնակչությունը (շուրջ 500 հազար մարդ) հարկադրաբար լքեց իր բնակավայրերը: Ադրբեջանից գաղթած հայերը բնակություն հաստատեցին մասամբ Հայաստանում և ԼՂՀ-ում, իսկ մի ստվար զանգված էլ արտագաղթեց օտար երկրներ, գլխավորապես, Ռուսաստանի Դաշնություն: Մփյուռքը համալրվեց 1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունից զանգվածային արտագաղթի հետևանքով՝ հիմնականում պայմանավորված սոցիալ-տնտեսական գործոններով. շրջափակում, էներգետիկ ճգնաժամ, գործազրկություն, ցածր կենսամակարդակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ առաջացած լարվածությունը և այլն: Հարյուր հազարավոր արտագաղթածներ բնակություն հաստատեցին Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Եվրոպայի տարբեր երկրներում: Այսօր հայերը սփռված են աշխարհի ավելի քան 120 երկրներում:
13. Բոլոր ժամանակներում Մփյուռքի համար գերխնդիրը եղել և մնում է հայապահպանությունը, ազգային ինքնության պահպանումը՝ այլ պետությունների քաղաքական, տնտեսական, մշակութային ներգործության պայմաններում: Հայապահպանությանն անհրաժեշտ նախապայմաններ են սփյուռքահայերի ազգային-կրթական, հոգևոր-մշակութային հավաքական և միասնական գործունեությունը, նրանց համախմբումն ու ինքնահաստատումը համայնքներում, ազգային կառույցներում: Հայաբնակ բոլոր վայրերում գործող համայնքների

կառուցվածքային հենքը հայ եկեղեցին, հայ դպրոցն ու հայկական բազմաբնույթ կազմակերպություններն են:

14. Սփյուռքում հայապահպանության, ազգային ինքնության պահպանության և հայության իրավունքների ձեռքբերման գործում պատմական անուրանալի դեր են կատարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իր նվիրապետական աթոռներով. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանը: Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում էական դերակատարություն ունեն Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիները, Միխթարյան միաբանությունը, համահայկական կառույցները և կուսակցությունները՝ ՀՅԴ-ը, ՌԱԿ-ը, ՄԴՀԿ-ը, ՀԲԸՄ-ն, տարբեր միություններ, համահայկական կառույցներ և կազմակերպություններ, այդ թվում՝ Հայ համազգային կրթական, մշակութային միությունը, Գալուստ Կյուլբենկյան հիմնարկությունը, Հայ օգնության միությունը, հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Թեքեյան մշակութային միությունը, Նոր սերունդը, Հայ միացյալ ֆոնդը, Հայ օգնության ֆոնդը, Լինսի հիմնադրամը, , սփյուռքահայ մամուլը, հայագիտական կենտրոնները, ամբիոնները, ինչպես նաև հայ մեծանուն անհատներն ու երախտավորները: Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունների տարածքներում հիմնվեցին ազգային բազմաբնույթ կազմակերպություններ և միավորումներ: Դրանց շարքում են Հայերի համաշխարհային կոնգրեսը, Ռուսաստանի հայերի միությունը, Ուկրաինայի հայերի միությունը՝ իրենց մասնաճյուղերով:
15. Սփյուռքի գրեթե բոլոր կազմակերպությունների գործունեության կարևոր նպատակներից է ցեղասպանության ճանաչման գործընթացը, որում ընդգծված դերակատարություն ունեն Հայ Դատի հանձնախմբերը, Ամերիկայի հայկական համագումարը, Ամերիկայի Հայկական Ազգային Կոմիտեն և ազգային բոլոր կազմակերպությունները: Այդ կազմակերպությունների երկարամյա ու հետևողական գործունեությունը և համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ մեծապես նպաստել են Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստի ճանաչմանն ու դատապարտմանը քսանից ավելի պետությունների խորհրդարանների կողմից:
16. Սփյուռքի գրեթե բոլոր համայնքներում գործում են հասարակական, բարեգործական, մշակութային, կրթական, երիտասարդական-մարզական, կանանց, մասնագիտական և բազմաթիվ այլ միություններ: Այդուհանդերձ, տակավին չեն ձևավորվել ողջ սփյուռքահայության անունից միասնաբար հանդես գալու լիազորություն ունեցող ներկայացուցչական մարմիններ: Նման մարմին ստեղծելու, սփյուռքահայերի կազմակերպությունների ազգային գործունեությունը համադրելու փորձերը մնացել են սահմանափակ, էական արդյուքներ չեն տվել:
17. Սփյուռքի նորաստեղծ համայնքներում հայերից ոչ բոլորն են, որ լիարժեք տիրապետում են իրենց բնակության երկրի պետական լեզվին, ինչը խոչընդոտներ է ստեղծում տվյալ երկրի հասարակությանն ինտեգրվելու գործում: Իսկ Սփյուռքի մի շարք կազմակերպությունների միջև առկա տարաձայնություններն էլ երկար ժամանակ խոչընդոտել են Սփյուռքի միասնականությանը:
18. Ցեղասպանության հետևանքով ոչ քիչ թվով հայեր բռնի կրոնափոխ եղան և նրանց սերունդները հիշում ու գիտակցում են իրենց հայկական ծագումը: Միաժամանակ, ազգային ինքնագիտակցությունը պայմանավորված է նաև հասարակական միջավայրով և այն յուրաքանչյուր անհատի մոտ դրսևորվում է յուրովի:
19. Սփյուռքի համար արդիական են հայապահպանման, ինքնակազմակերպման, փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման, բնակության երկրների հասարակական, մշակութային, քաղաքական և քաղաքացիական կյանքին ինտեգրման, կենսամակարդակի բարելավման, մասնագիտական համախմբման և այդ ներուժը հայրենիքի հզորացմանն ուղղելու, ազգահավաքության և այլ հիմնախնդիրներ:

20. Հայաստանյան հասարակության շրջանում Սփյուռքի ընկալումը հաճախ տարբերվում է Սփյուռքի ինքնընկալումից: Թեև տարբեր երկրների համայնքներն ունեն էական առանձնահատկություններ՝ պայմանավորված տվյալ երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային միջավայրով, Հայաստանում Սփյուռքը հաճախ ընկալվում է որպես հավաքական միավոր:
21. Հայաստանաբնակները և սփյուռքահայերը միմյանց լավ չեն ճանաչում, քանի որ ապրել ու մեծացել են սոցիալական տարբեր միջավայրերում: Հետևաբար, տարբեր է գործակցության գերակայությունների ընկալումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի տարբեր հատվածներում:

1.2. Հայաստան-Սփյուռք գործակցության գնահատականը և բնագավառները

22. Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ նրա մշտական և բազմաբնույթ հարաբերություններն են, որոնք որակական նոր մակարդակի հասան **1991թ.** հայկական անկախ պետականության վերահաստատումից հետո: Անկախության վերականգնումից հետո Հայաստան-Սփյուռք գործակցությունը ծավալվել է հիմնականում մի քանի ուղղություններով. արտաքին քաղաքականության օժանդակման, կրթության, մշակույթի, սպորտի, տեղեկատվության, հայկական եկեղեցիների, համահայկական կառույցների, սփյուռքյան կազմակերպությունների, անհատների և համահայկական տարաբնույթ ձեռնարկումների միջոցով:
23. **1992թ.** ստեղծված «Հայաստանե համահայկական հիմնադրամի (ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանե համահայկական հիմնադրամ ստեղծելու մասին **1992թ.** մարտի 3-ի թիվ ՆՀ-80 հրամանագրով) շուրջ համախմբվեցին մեծաթիվ սփյուռքահայեր, որոնց նյութական նվիրատվություններն ուղղվեցին նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամրապնդմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը: Ամբողջությամբ վերակառուցվեցին Գորիս-Ստեփանակերտ, «Հյուսիս-Հարավե ավտոմայրուղիները, ջրագծեր, դպրոցներ, մշակութային օջախներ և այլն:
24. Համահայկական խնդիրներ քննարկելու նպատակով **1999-ին, 2002-ին և 2006-ին** Երևանում հրավիրվեցին «Հայաստան-Սփյուռքե համահայկական խորհրդաժողովներ, անցած տասը տարիների ընթացքում անցկացվեցին նաև Համահայկական մարզական խաղեր, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոներ, գրողների, երիտասարդների հավաքներ, հայագիտական ու մասնագիտական համահայկական գիտաժողովներ և այլն: Սփյուռքը նյութական և բարոյական նեցուկ եղավ Հայաստանին, երկրաշարժից ու պատերազմից տուժածներին, փախստականներին: Մասնավորապես, Լինսի հիմնադրամը մեծ ներդրում կատարեց երկրի ենթակառուցվածքների զարգացման, կրթական ու մշակութային հաստատությունների վերանորոգման, ինչպես նաև աղետի գոտին վերականգնելու գործում: Աշխուժացան նաև սփյուռքահայ գործարարների ծրագրերը Հայաստանում: Գործարարությանը նպաստող օրենսդրությունը, ազատ շուկան բարենպաստ պայմաններ ստեղծեցին ներդրումների ավելացման և Սփյուռքի գործարարներին Հայաստանի տնտեսության մեջ ներգրավելու առումով:
25. Ինչպես Հայաստանում, այնպես էլ օտար պետությունների այցելությունների ընթացքում ՀՀ իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչները պարբերաբար հանդիպումներ են ունեցել հայրենակիցների հետ, քննարկել Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրները:

1.3. Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական արդյունքները

26. Հայաստանի Հանրապետության վարած նպատակային քաղաքականության արդյունքում ձևավորվել են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կարևոր նախադրյալներ:
27. Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի գործակցությունը համակարգված հունի մեջ դնելուն նպաստեցին «Հայաստանե համահայկական հիմնադրամը, «Հայաստան-Սփյուռքե համաժողովները, գործարարների հանդիպումները, համահայկական փառատոները, համահայկական խաղերը, մասնագիտական համաժողովները, հայրենադարձության հիմնախնդիրներին նվիրված համաժողովները, հարյուրավոր սփյուռքահայերի հաստատումը հայրենիքում և այլն:

1.4. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության իրականացման իրավական հիմքերը

28. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունը հենվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմունքների, նորմերի և սկզբունքների, ինչպես նաև ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների, ՀՀ օրենսդրության վրա:
29. Հայ ժողովուրդը՝ վերականգնելով ինքնիշխան պետությունը և հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրորեն ամրագրել է Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները, իրականացրել է ինքնիշխան պետության վերականգման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրվածությունը հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, կատարել է սերունդների ազատությունն ապահովելու պարտավորությունը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է **1995թ. հուլիսի 5-ին**. (ուժի մեջ է **1995թ. հուլիսի 13-ից**): **2005թ. նոյեմբերի 27-ի** հանրաքվեով ընդունվեցին սահմանադրական փոփոխությունները (ուժի մեջ է **2005թ. դեկտեմբերի 5-ից**):
30. Հայաստան-Սփյուռք գործակցությունը զարգանում է իրավահավասարության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է յուրաքանչյուրի մտքի, խղճի, կրոնի ազատության, իր կարծիքն ազատորեն արտահայտելու, խոսքի ազատության և ազգային ու էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունքը, երաշխավորում է լրատվամիջոցների ազատությունը:
31. ՀՀ պետական մարմինների շփումները, համայնքային կառույցների և անհատների հետ իրականացվում են միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում, բոլոր պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու սկզբունքին համապատասխան:
32. Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են Հայաստանի Հանրապետության հոգածության ու պաշտպանության ներքո: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան նպաստել այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական ու մշակութային կյանքի զարգացմանը:
33. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքացիության իրավունք է տրվում ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի յուրաքանչյուր երեխայի, այլև երաշխավորում է ազգությամբ հայի պարզեցված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, երկքաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը:
34. Պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, պետական քաղաքականության համակարգի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության (ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության

Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին 2007թ. փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը) շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունը հայապահպանությունն ընդունում է որպես ազգային անվտանգության հիմնարար արժեք և հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը Հայաստանում և Մփյուռքում: Հայապահպանության համար կարևորվում է հայոց լեզվի և գրականության, հայկական մշակույթի, հայ պատմագիտության և հայագիտության այլ ճյուղերի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ու անվտանգությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների զարգացումը:

35. Հայաստանի Հանրապետությունը Մփյուռքի ազգային ինքնագիտակցության թուլացումը, ուժացումը համարում է արտաքին սպառնալիք, իսկ Հայաստան-Մփյուռք գործակցության թուլացումը, փոխհարստացնող տարրի բացակայությունը՝ վտանգավոր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար սկզբունքների համար: Հայաստան-Մփյուռք գործակցության ռազմավարությունը կարևորում է հայոց պետության ջանքերը՝ ուղղված Մփյուռքի ուժացմանը դիմակայելուն և լեզվամշակութային ինքնության կորստի կանխմանը:
36. Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման սկզբունքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության Նախագահի քաղաքական Ծրագրում (ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ծրագիրը. <http://www.president.am/library/program/arm>), որում համայն հայության միացյալ ներուժը համարվում է որպես Հայաստանի Հանրապետության մրցակցային առավելություն համաշխարհայինացվող աշխարհում: Ծրագիրը հայ ժողովրդի ազգային միասնությունը դիտում է որպես երկրորդ սերնդի բարեփոխումների հիմնական նախադրյալ, իսկ հայ ժողովրդի հոգևոր միասնությունը՝ հայոց պետականության զարգացման հիմնական երաշխիք: Հանրապետության Նախագահի Ծրագիրը կարևորում է համազգային համագործակցության և վստահության մթնոլորտի ձևավորումն ու Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է որպես աշխարհասփյուռ հայության քաղաքական, մշակութային, տնտեսական հետաքրքրությունների կենտրոն՝ երաշխավորելով Մփյուռքի ներգրավումը համազգային ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
37. ՀՀ կառավարությունն իր ծրագրային խնդիրն է համարում օտար պետություններում հայության շահերի պաշտպանությունը, Հայաստան-Մփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակումն ու իրականացումը: Մփյուռքում հայապահպանության խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունը կարևորում է Մփյուռքի ուսումնակրթական հաստատությունների խնդիրների լուծման հարցում կառավարության հնարավորինս լայն մասնակցությունը՝ Մփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրեր և ձեռնարկներ մշակելու, դասագրքերով ապահովելու, սփյուռքահայ ուսուցիչներին Հայաստանում վերապատրաստելու, հանրային հեռուստատեսության ծրագրերի արբանյակային հեռարձակումն ընդլայնելու, այդ ծրագրերի որակն ու բովանդակությունը բարելավելու, համացանցային դաստիարակչական ու ժամանցային նոր ծրագրերի միջոցով:
38. ՀՀ կառավարությունը Մփյուռքը համարում է Հայաստանի համար համաշխարհային ինտեգրման հուսալի և արդյունավետ կամուրջ ու պարտավորվում է ստեղծել կայուն և արդյունավետ մեխանիզմներ՝ հայրենիքի ներքին կյանքին Մփյուռքի ներուժի ներգրավման ու սփյուռքահայերի աջակցությամբ միջազգային կառույցների հետ ներպետական կառույցների աշխատանքի բարելավման համար: Նախատեսվում է ստեղծել Մփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմներ և տվյալների միասնական համակարգ: ՀՀ կառավարությունը պարտավորվում է մշակել և ներդնել ազգահավաքը, հայրենադարձությունը խթանող ծրագրեր, ստեղծել պետական կառավարման համապատասխան մարմինների հետ էլեկտրոնային հաղորդուղիներով փոխադարձ անմիջական կապի հնարավորություն, մշակել հայրենադարձությունը խթանող օրենսդրություն և ծրագրեր:

39. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ ՀՀ կառավարությունը ծրագրում է Հանրապետության տարածքում և օտար պետություններում գտնվող մշակութային արժեքների հաշվառում, սփյուռքահայ արվեստագետների ներգրավում Հայաստանի մշակութային կյանքին, հայագիտության արդի և հեռանկարային հիմնահարցերի լուծմանն ուղղված գիտական ծրագրերի մշակում ու իրագործում:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման համակարգված քաղաքականությունը

40. 21-րդ դարում Հայաստանի Հանրապետության ու աշխարհասփյուռ հայության առջև ծառայած արտաքին և ներքին մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև ու բովանդակություն հաղորդել Հայաստան-Սփյուռք գործակցությանը, հենվելով առավելապես մարդկային, մշակութային և սոցիալական կապիտալի, հասարակական լիարժեք ինտեգրման ու մրցունակության կռիվների վրա:

41. ՀՀ կառավարությունը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովում է Հայաստան-Սփյուռք գործակցության տարրերն ամբողջականացնելու, համակարգելու երկխոսության ու համատեղ քննարկումների միջոցով և հետևողականորեն շարունակում է.

ա) մարդու հիմնարար իրավունքների, ազատությունների և կենսական շահերի պաշտպանության հարցում հիմնվել միջազգային իրավական գործիքների վրա,

բ) ապահովել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության հիմնական միջոցների համաչափ կիրառումը՝ համահայկական միջոցառումները, Հայաստան-Սփյուռք գործակցության առանձին խնդիրների օրենսդրության կատարելագործումը, ընթացակարգերի ներդրումը և կիրարկումը, Հայաստանի և Սփյուռքի կազմակերպությունների համագործակցությունը, հայագիտության զարգացումը, Հայաստան-Սփյուռք գործակցության մասին տեղեկատվության կառավարումը,

գ) ապահովել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության իրականացման համար պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեությունը, ոլորտի քաղաքականության համակարգումը՝ այդ մարմինների գործառույթների տարանջատման, բնագավառի մասնագետների մասնագիտական կարողությունների զարգացման, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանման և այդ մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով,

դ) ապահովել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության պարբերական վերանայումն ու ճշգրտումը՝ համագործակցելով սփյուռքյան կազմակերպությունների հետ, ինչպես նաև դրա ներդաշնակությունը այլ ոլորտներում վարվող պետական քաղաքականության գերակայություններին՝ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության միջոցառումների իրականացման ու արդյունքների շարունակական մոնիտորինգի, գնահատման և ձեռք բերված փորձի վերլուծության միջոցով,

ե) հաղթահարել հայկական Սփյուռքի մասին առկա կարծրատիպերը և իրական պատկեր ունենալ պատմական, աշխարհաքաղաքական, մշակութային տարբեր պայմաններում գտնվող հայ մարդու մասին՝ աշխարհասփյուռ հայության հատվածների իրական

կարիքները կանոնավոր հաշվառելու, գնահատելու, պատմությունն ուսումնասիրելու, համապատասխան մասնագետներ պատրաստելու, գիտահետազոտական կառույցներ ստեղծելու միջոցով:

2.2. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության հիմնական սկզբունքները, նպատակները

42. Սփյուռքի համայնքները գտնվում են աշխարհաքաղաքական և քաղաքակրթական տարբեր միջավայրերում, հետևաբար, տարբեր ու առանձնահատուկ են նաև հայության տարբեր հատվածների աշխարհընկալման, հոգեկերտվածքի, մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական կողմնորոշումները: Ուստի, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունը որդեգրում է տարբերակված մոտեցումներ և լուծումներ՝ ուղղված հայության տարբեր հատվածների, տարածաշրջանների յուրաքանչյուր համայնքի կարիքների բավարարմանը, նրանց ներուժի ներառմանը համապատասխան ծրագրերում:
43. Հայաստանի և Սփյուռքի հայությունը սնվում են պատմամշակութային ընդհանուր արմատներից և հզոր են մեկը մյուսով. Հայաստանի առջև ծառայած մարտահրավերները Սփյուռքին են, իսկ Սփյուռքի հիմնախնդիրները՝ Հայաստանին: Հայ ժողովրդի հզորությունը բոլոր հայերի հավաքական, միասնական հզորությունն է և պետք է ավելանա ամենուր: Հետևաբար, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումն ուղղված է Հայաստանի և Սփյուռքի զարգացմանն ու հզորացմանը, հայ ժողովրդի տարբեր հատվածների կարողությունների բազմապատկմանը և ուժեղացմանը:
44. Սփյուռքի մշակութային, կրթական, լեզվական, կրոնական, քաղաքական, գաղափարական բազմազանությունը համայն հայության ուժն է, Հայաստանի պետության ամենամեծ ռեսուրսը, որն անսպառ հնարավորություններ է ընձեռում Հայաստանի և Սփյուռքի կայուն զարգացման համար: Ուստի, Հայաստան-Սփյուռք գործակցությունը հիմնվում է փոխադարձ օգնության, փոխըմբռնման, գործունեության թափանցիկության, համագործակցության, մարդասիրական սկզբունքների վրա և բացառում է մշակութային, լեզվական, կրոնական, քաղաքական, ռասայական խտրականության ցանկացած դրսևորում:
45. Հայաստանը եղել և մնում է սփյուռքահայության Հայրենիքն ու վերջնական հանգրվանը: Վերոհիշյալը հաշվի առնելով՝ հայկական անկախ պետականությունը, նրա անվտանգության և պաշտպանության ապահովումը, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ու հոգևոր հզորացման հրամայականը Հայաստան-Սփյուռք գործակցության առանցքն է, նպատակը, որի շուրջ Հայաստանի Հանրապետությունը համախմբում է աշխարհասփյուռ հայ ժողովրդին, հայկական համայնքների կյանքն ու գործունեությունը: Հայկական ներուժի լիարժեք օգտագործմամբ է հնարավոր հզորացնել հայությունը և միայն արհավիրքների ու դրանց հետևանքների վերացման շուրջ չէ, որ պետք է համախմբվի և միաբանվի հայությունը: Հետևաբար, Հայաստան-Սփյուռք հայաստանակենտրոն գործակցության զարգացման արդյունք պետք է դառնա ՀՀ անվտանգության ապահովումը, պաշտպանությունը, ԼՂՀ-ի հարցի խաղաղ և արդարացի կարգավորումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, Սփյուռքի ուժացման կանխումը, հզոր Հայաստանի կառուցումը: Հայի տունն աշխարհն է, օջախը՝ Հայաստանը:
46. Հայաստան-Սփյուռք գործակցության նպատակը հայրենիքում հաստատված կամ օտար երկրում բնակվող յուրաքանչյուր հայ մարդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ սփյուռքահայի հիմնարար իրավունքների և ազատությունների, օրինական շահերի, այդ թվում՝ լեզվի, մշակույթի, դավանանքի, կրթության, ազատ տեղաշարժվելու իրավունքների, պաշտպանությունն է՝ միջազգային իրավունքի շրջանակներում, նրա ինքնության պահպանությունը՝ հայապահպանությունը, ինչպես նաև հայրենիքի ու Սփյուռքի միջև կապերի սերտացումն է: Հայկական աշխարհի ձևավորմանը նպաստում են Հայաստան-Սփյուռք

գործակցության զարգացման քաղաքականության մշակմանը, իրականացմանը, համակարգմանը և արդյունքների գնահատմանը:

2.3. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման գերակա ուղղություններն ու խնդիրները

47. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումն ուղղված է հայ մարդու, Սփյուռքի համայնքների և հայկական պետականության զարգացմանն ու հզորացմանը, նրանց ստեղծած արժեքների մրցունակության բարձրացմանը՝ միշտ և ամենուրեք:

48. Հայրենիքում հաստատված կամ օտար պետություններում բնակվող հայ մարդու զարգացմանն ուղղված Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական խնդիրներն են.

ա) նպաստել հայ ազգային ինքնության միասնական միջավայրի ձևավորմանը, հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու արմատավորմանը, հայապահպանությանը՝ ձուլման դեմ պայքարին ազգի, մայրենիի հարատևման համար,

բ) աջակցել Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանը և ներգավմանը Հայաստանի ու Սփյուռքի զարգացման գործընթացներում: Ստեղծել համահայկական ցանց, մասնագիտական հանձնախմբեր,

գ) աջակցել հայ մարդու լիարժեք ինտեգրմանը բնակության կամ քաղաքացիության երկրի հասարակական, քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքին, որը արգելք չէ հայապահպանմանը,

դ) նպաստել այլալեզու և այլակրոն հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը, նրանց «հայադարձությանը»,

ե) մշակել տարածաշրջանային ռազմավարական ծրագրեր՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները,

զ) աջակցել համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ձևավորմանն ու զարգացմանը, սփյուռքյան կազմակերպությունների հետ մշակել և իրականացնել համահայկական ծրագրեր,

է) մշակել ազգահավաքն ու հայրենադարձությունը խթանող ծրագրեր, աջակցել հայոց պետականության ամրապնդմանը: Հայրենադարձությունը յուրաքանչյուր հայի համար Հայրենիքի հետ կենսական և հոգևոր կապի ամենավառ դրսևորումներից է, որը պետք է արտահայտվի տևական ժամանակով հայրենիքում ապրելու, գործունեություն ծավալելու, կարճաժամկետ աշխատանքներ (մշակութային, կրթական, սոցիալական) իրականացնելու միջոցով,

ը) նպաստել հայկական համայնքների համախմբմանը,

թ) աջակցել հայկական ուսումնական հաստատությունների զարգացմանը, մեկօրյա դպրոցների ցանցի ընդլայնմանը, արտերկրի համալսարաններում գործող հայագիտական կենտրոններին, ամբիոններին և մշակել առանձին ծրագրեր

ժ) մշակել տարածաշրջանային ռազմավարական ծրագրեր՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները,

ի) աջակցել տարբեր համալսարաններում գործող հայագիտական կենտրոններին, ամբիոններին և մշակել առանձին ծրագրեր:

49. Սփյուռքի համայնքների զարգացմանն ուղղված Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական խնդիրներն են.

ա) նպաստել հայապահպանության և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը սփյուռքահայերի բնակության բոլոր երկրներում,

բ) աջակցել Սփյուռքի համայնքների միավորմանն ու համախմբմանը հայկական ինքնության շուրջ, համայնքային ինքնակառավարման կառույցների ստեղծմանը, Հայաստանի հետ այդ կառույցների կապերի ամրապնդմանը և զարգացմանը,

զ) ներառել առանձին պետությունների հետ ՀՀ երկկողմ միջպետական հարաբերությունները կարգավորող փաստաթղթերում (պայմանագրեր, համաձայնագրեր) Մփյուռքի համայնքների շահերի պաշտպանությունն ամրագրող դրույթներ,

դ) նպաստել յուրաքանչյուր հայի հայրենիք այցելությանը և, հատկապես, Մփյուռքի հայ երիտասարդների ուխտագնացությանը Հայաստան,

ե) օժանդակել հայ ոգու, ազգային մշակույթի և ավանդույթների պահպանմանը, զարգացմանը, տարածմանը և սերունդներին փոխանցմանը,

զ) աջակցել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով համահայկական էլեկտրոնային շտեմարանի կազմմանը, հեռավար կրթական համակարգերի ներդրմանը, տեսահամաժողովների կազմակերպմանը, հայագիտության զարգացմանը, տեղեկատվության տարածմանը, հետադարձ կապի ապահովմանը:

50. Հայկական պետականության զարգացմանն ուղղված Հայաստան-Մփյուռք գործակցության հիմնական խնդիրներն են.

ա) նպաստել առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ բազմակողմանի կապերի հաստատմանը, ամրապնդմանը՝ Մփյուռքում ժողովրդական դիվանագիտության, լոբբիստական գործունեության զարգացման միջոցով,

բ) աջակցել հայկական պետականության ամրապնդմանն ու համազգային խնդիրների լուծման հարցում սփյուռքահայերի արդյունավետ մասնակցության համար նպաստավոր քաղաքական, տնտեսական, մշակութային, իրավական և հոգևոր միջավայրի ձևավորմանը,

գ) համախմբել Հայաստանի և Մփյուռքի քաղաքական, տնտեսական, մտավոր, գիտակրթական, հոգևոր-մշակութային, մասնագիտական կարողությունները, ջանքերը՝ ուղղված պետությունների և միջազգային համայնքի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ԼՂՀ-ի հիմնախնդրի խաղաղ և արդարացի կարգավորմանը, համազգային նշանակության խնդիրների ձևակերպմանն ու լուծմանը:

2.4. Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականություն իրականացնող մարմինները և գործակցության բնագավառները

51. Պետություն-համայնքներ գործակցության զարգացման մասնագիտացված մարմինների միջազգային փորձը հատկանշում է պետական իշխանության մարմինների միջև գործառույթների տարանջատման և համակարգման կառուցվածքային մի շարք լուծումներ:

52. Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման արդյունավետ քաղաքականության կառավարման մոդելի ընտրությունը պայմանավորված է Հայաստան-Մփյուռք գործակցության ընթացքում կուտակված փորձով, ներգրավված մարմինների և դրանց անձնակազմերի մասնագիտական կարողություններով, ներպետական ու միջազգային իրավական համակարգերով, ֆինանսական առկա հնարավորություններով և այլ գործոններով:

53. Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակման, դրա իրականացման վերահսկողության և համակարգման, օրենսդրության կատարելագործման, Հայաստան-Մփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվության կառավարման, գործակցության զարգացմանը քաղաքացիական հասարակության և համահայկական կառույցների, Մփյուռքի կազմակերպությունների ներգրավման, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային գործառույթները տարանջատված են առանձին ոլորտներում Հայաստան-Մփյուռք գործակցության, ինչպես նաև գործակցության մեջ ընդգրկված պետական մարմինների գործունեության համակարգման գործառույթներից:

54. Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման, դրա շարունակական կատարելագործմանն ու պետական այլ մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով **2008**թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության կազմում գործում է ՀՀ սփյուռքի նախարարությունը («Հայաստանի

Հանրապետության Կառավարության կառուցվածքի մասին» թիվ ՀՕ-79-Ն ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովն ընդունել է 2008թ. հունիսի 17-ին: Հայաստանում 1964թ. ստեղծվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե, ապա 1998թ. ԱԳՆ-ում սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն, իսկ 2008թ. ապրիլից մինչև հոկտեմբեր՝ պետական կոմիտե:

55. ՀՀ սփյուռքի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը Հանրապետության Նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է Հայաստանի ու Սփյուռքի հետ կապերի ամրապնդման, դրանց գործակցության զարգացման, Սփյուռքի ներուժի հայտնաբերման, ներգաղթին աջակցելու, պետական և հասարակական այլ մարմինների հետ համագործակցության, օրենքով, իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև համագործակցում է դիվանագիտական ծառայությունների հետ՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների շրջանակներում:

56. Նախարարության հիմնական գործառնությունները, մասնավորապես, ներառում են.

ա) մշակել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունը և այդ ուղղությամբ ՀՀ Նախագահին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել առաջարկություններ,

բ) զարգացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերը, ընդհանրացնել նախարարության գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկան և մշակել իրավական ակտերի նախագծեր՝ սփյուռքահայերի կացության իրավունքի, երկրաբաղաճիության, իրավաքաղաքացիական հարաբերությունների, հայրենադարձությունը խթանող ծրագրերի, հաղորդակցման հնարավորությունների և այլնի վերաբերյալ,

գ) մշակել և իրականացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, Հայաստանի, հայ ժողովրդի վարկանիշն ավելացնող համահայկական նպատակային ծրագրեր, Հայաստանում և Սփյուռքում կազմակերպել համատեղ միջոցառումներ, աջակցել փառատոների, հավաքների, մշակույթի, կրթության, հոգևոր, տնտեսական, մարզական և այլ ոլորտներում Հայաստան - Սփյուռք կապերի ամրապնդմանը, հրավիրել գիտաժողովներ, խորհրդաժողովներ՝ համագործակցելով այդ ոլորտներում պետական լիազոր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

դ) նպաստել Սփյուռքի կրթական, մշակութային, մարզական և այլ կազմակերպությունների, այդ ոլորտներում գործող առանձին անհատների ու Հայաստանի համապատասխան կազմակերպությունների և անհատների միջև կապերի հաստատմանն ու զարգացմանը, մասնագետների գործուղմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող պետական և հասարակական նախաձեռնություններին: Համապետական և համահայկական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ քննարկումներում, միջոցառումներում և ծրագրերում ներգրավել Սփյուռքի մշակութային գործիչների, գիտնականների, ձեռներեցների, կանանց և երիտասարդների,

ե) մասնակցել հայեցի կրթության և դաստիարակության ռազմավարության մշակմանը, նպաստել համահայկական կրթական ծրագրերի իրականացմանը, Հայաստանի և Սփյուռքի մասնագետների մասնակցությամբ կառույցների և համապատասխան ծրագրերի ու դասագրքերի մշակմանը և հրատարակմանը, աջակցել վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, կրթամշակութային հաստատություններն անհրաժեշտ դասագրքերով և մեթոդական ձեռնարկներով ապահովմանը, Հայաստանի բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սփյուռքահայերի ուսումնառության հնարավորությունների ընդլայնմանը: Աջակցել մեկօրյա դպրոցների, ամառային ճամբարների ստեղծմանը,

զ) մասնակցել «Սփյուռքի մշակույթի զարգացման ռազմավարության» մշակմանը և իրականացմանը, աջակցել հայապահպան գործունեությանը՝ մշակույթի արտահանմանը համայնքներ, մշակութային ժառանգության պահպանմանը, պաշտպանմանը, զարգացմանը և տարածմանը, նպաստել հայկական ունեցվածքի պաշտպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,

է) աջակցել ՀՀ տնտեսական ծրագրերին Սփյուռքի ձեռներեցների մասնակցությանը՝ ՀՀ տնտեսական զարգացման, տարածաշրջնային և միջազգային մրցունակության ամրապնդման նպատակով, ինչպես նաև աջակցել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև զբոսաշրջության զարգացման գործում Սփյուռքի գործարարների ջանքերին ու նրանց կողմից իրականացվող միջոցառումների համակարգմանը,

ը) մշակել Հայաստանի և Սփյուռքի «տեղեկատվության փոխանակման ռազմավարություն», համահայկական միասնական տեղեկատվական համակարգեր՝ (էլեկտրոնային կայքեր, ֆիլմեր, գրքույկներ, գրքեր, խտասալիկներ), մշակել ու իրականացնել հեռուստակամուրջների, տեսակոնֆերանսների, համահայկական համաժողովների անցկացման ծրագրեր, ձեռք բերել և համակարգել յուրաքանչյուր երկրի հայկական համայնքի մասին լիարժեք, ամբողջական պատմական, վիճակագրական, քաղաքական, կրթամշակութային, հոգևոր, գիտական, տնտեսական և այլ տեղեկություններ, նպաստել հայկական համայնքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բանկի ստեղծմանը,

թ) օժանդակել Սփյուռքի համար մասնագետների պատրաստմանն ու կատարելագործմանը համապատասխան ամբիոնների, կենտրոնների, ֆակուլտետների ստեղծման, դասընթացների միջոցով, Սփյուռքի պատմության ուսումնասիրությանը Սփյուռքում և Հայաստանում հետազոտությունների կազմակերպման միջոցով,

ժ) մշակել բռնի կրոնափոխ եղած հայերի, նրանց սերունդների և տարբեր դավանանք ունեցող հայերի վերինտեգրման ծրագրեր, նրանց վերաբերյալ իրականացնել ուսումնասիրություններ և մշակութային ծրագրեր,

Ճ) մասնակցել հակահայկական քարոզչության, որոշ երկրներում հայատյացության դրսևորումների, հայոց պատմության կեղծարարների դեմ պայքարի ճկուն և հստակ կառուցակարգերի ձևավորմանը և հակազդեցության կազմակերպմանը,

Ժբ) նպաստել մայրենիի արևելահայերեն և արևմտահայերեն ճյուղերի մերձեցմանը,

ժգ) մշակել Սփյուռքի չկազմակերպված հատվածի ինքնակազմակերպմանը, համահայկական մասնագիտական հանձնախմբերի, միավորումների ստեղծմանն ու գործունեությանը նպաստող ծրագրեր,

ժդ) օժանդակել Սփյուռքում մասնագիտական կազմակերպությունների, կառույցների ստեղծմանը,

ժե) մասնակցել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի և «Եվրոպական նոր հարևանություն» ծրագրի շրջանակներում Հայաստան-Եվրամիություն գործողությունների ծրագրի իրականացմանը,

ժզ) նպաստել սփյուռքահայերի երկքաղաքացիության ձեռքբերման ընթացակարգերի կատարելագործմանը,

ժէ) ապահովել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ինչպես նաև Հայ Կաթոլիկ ու Հայ Ավետարանական եկեղեցիների հետ սերտ համագործակցությունը՝ իրենց իրավասությանը վերաբերող հարցերում:

57. Նախարարությունը գործում է որպես պատվիրատու և պետական տարբեր գերատեսչությունների առաջադրում կոնկրետ խնդիրներ: Օտար պետություններում նախարարությունն իր ծրագրերն իրականացնում է ՀՀ դեսպանությունների օգնությամբ: Նախարարությունը գործում է իրավահավասարության, ժողովրդավարության,

օրինականության, մարդասիրության, թափանցիկության, հրապարակայնության, համագործակցության, հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:

58. Հայաստանի շուրջ համազգային համախմբման միջոցով հայության առջև ծառայած հիմնական խնդիրների, նպատակների, առաջնահերթությունների միասնաբար առաջադրումն ու իրականացումը, Հայաստան, ԼՂՀ և Սփյուռք միասնական ուժերով է հնարավոր հզորացնել ազգային պետությունը, պայքարել 21-րդ դարի մարտահրավերների դեմ, փրկել Սփյուռքը ուժացումից, լուծել ԼՂՀ հարցը:

Հայաստան-Սփյուռք գործակցությանը համահայկական ընդգրկում հաղորդելու, համազգային, համամարդկային խնդիրները համատեղ քննարկելու և սկզբունքները որոշելու, ազգային-պետական առաջնահերթությունները ճշգրտելու, պետական մարմինների գործունեությանն համահայկական, համազգային բնույթ հաղորդելու և դրանց միջև Հայաստան-Սփյուռք գործակցությանը նվիրված համագործակցություն ապահովելու նպատակով ՀՀ Նախագահի ղեկավարությամբ նախատեսվում է ստեղծել համահայկական կենտրոնական մարմին՝ Ազգային խորհուրդ: Ազգային խորհուրդն ունենալու է ազգային-հասարակական խորհրդատվական բնույթ, որը քննության առարկա է դարձնելու համազգային առաջնահերթությունները, համահայկական հիմնահարցերը՝ հաշվի առնելով Հայաստանի, ԼՂՀ-ի և տարբեր պետություններում հայկական համայնքների առանձնահատկությունները: ՀՀ և ԼՂՀ պետական կառույցները Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը մշակելիս, վերանայելիս պետք է հաշվի առնեն Ազգային խորհրդի երաշխավորությունները: Ազգային խորհրդում ընդգրկվելու են ՀՀ և ԼՂՀ պետական պաշտոնյաներ, Սփյուռքի կառույցների ներկայացուցիչներ, հայտնի անհատներ, հոգևորականներ: Ազգային խորհուրդը գործելու է իր կանոնադրության համապատասխան:

59. Սփյուռքի հայկական դպրոցներում՝ հայապահպանության կարևորագույն օջախներում, աշակերտների թիվը նվազում է ֆինանսական և կազմակերպական մի շարք պատճառներով: Աշակերտների սակավաթվությունն իր հերթին բացասաբար է ազդում հայկական դպրոցների ֆինանսական միջոցների վրա, ինչը հաճախ դպրոցների փակվելու պատճառ է դառնում: Սփյուռքի դպրոցների համար տպագրվող և առաքվող դասագրքերը պարբերաբար թարմացման և լեզվի մատչելիության ապահովման կարիք ունեն: Սփյուռքի լինելության, գոյության կովաններից է հայոց լեզուն: Սփյուռքում հայոց լեզվի պահպանման և տարածման խնդիրը օրակարգային է. սփյուռքահայերի սովոր հատվածը չի տիրապետում հայերեն լեզվին կամ տիրապետում է մասնակի, իսկ Սփյուռքի որոշ համայնքներում հայերեն լեզվի գործածումը սահմանափակվում է բանավոր խոսքով: Անհրաժեշտ է հայկական համայնքներներում խթանել հայոց լեզվի իմացությունը և կիրառումը: Միաժամանակ, հայերենի վատ կամ սահմանափակ իմացությունը չպետք է որևէ կերպ խոչընդոտի գաղթօջախի հասարակական-քաղաքական կյանքում հայ մարդու ներգրավմանն ու լիարժեք մասնակցությանը: Լինելով հայկական ինքնության անկյունաքարը, հայոց լեզուն (որն անկախ իմացության աստիճանից, չպետք է խտրականության հիմք դառնա Սփյուռքի համայնքներում) պետք է ընկալվի նախևառաջ որպես Սփյուռքի հայկական համայնքների պահպանման միջոց: Նշված խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունը պետական լիազոր մարմինների միջոցով մշակելու և Սփյուռքում հետևողականորեն իրականացնելու է ազգային կրթության ծրագիր: Լեզվի ուսուցումն անհրաժեշտ է իրականացնել մեկօրյա, հանրակրթական, տվյալ երկրի դպրոցներում լրացուցիչ պարապմունքների (եթե համապատասխան թվով հայ երեխաներ կան), հեռավար ուսուցման և տեսասարքերի օգնությամբ:

60. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության բնագավառային գործառնություններ:

Վերջիններս ուղղված են հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր ներուժի ամրապնդմանը, կրթության բնագավառի հիմքը հանդիսացող ազգային դպրոցի գլխավոր նպատակի՝ մասնագիտական պատշաճ պատրաստվածությունն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված հայ անձի ձևավորմանը Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում: Մասնավորապես, նախարարությունը մշակում և իրականացնում է պետական կրթական քաղաքականություն Սփյուռքի նկատմամբ, ինչպես նաև աջակցում է հայապահպան կրթական գործունեությանն ուղղված ծրագրերի մշակմանը, իրականացմանն ու դիտարկմանը (մոնիտորինգին): Նախարարությունն ազգային կրթության հայեցակարգի շրջանակներում անմիջականորեն իրականացնում է Սփյուռքի կրթական հաստատություններին ՀՀ կառավարության կողմից տրամադրվող օգնության կազմակերպումը, այդ թվում՝ ձևավորում է համատեղ մասնագիտական խմբեր, ստեղծում է հանրակրթական դպրոցներին և առանձին միօրյա դպրոցներին ուղղված կրթական դասընթացների ծրագրեր ու դասագրքեր, աջակցում է օտարախոս երեխաների համար՝ ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, հայոց լեզվի դասագրքերի հրատարակմանը սփյուռքահայ երիտասարդների լայն ներգրավմամբ Հայաստանում հայազետ մասնագետների պատրաստմանը: Նախարարությունը, ելնելով Սփյուռքի աշխարհագրության, լեզվական առանձնահատկություններից, իրականացնում է նաև հայաբնակ համայնքների համար ուսուցիչների պատրաստում ու վերապատրաստում, և անհրաժեշտության դեպքում մասնագետների գործուղում: Նախարարությունը նպաստում է Հայաստանում կրթական գործունեությանը Սփյուռքի մասնագետների մասնակցության ընդլայնմանը: Իրականացնում է ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրի մշակումը, դրա պարբերական վերանայումը և ընթացքի նկատմամբ վերահսկողությունը՝ հաշվի առնելով Սփյուռքում հայապահպանության գործում հայոց լեզվի կարևորությունը: Նախարարությունն իրականացնում է օտար պետություններում բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանման, տարածման և զարգացման ծրագրեր, ինչպես նաև աջակցում է Հայաստանի ու ԼՂՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Սփյուռքի կառույցների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, կրթության ու գիտության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպմանը:

61. Համահայկական կրթամշակութային միջոցառումները և նախաձեռնությունները պետք է նոր լիցքեր հաղորդեն սփյուռքահայությանը՝ ընդլայնելով դրանց մշակման ու իրականացման գործում հայկական կազմակերպությունների մասնակցության շրջանակը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է ներդրվեն և լիարժեք կիրառվեն հեռավար ուսուցման կազմակերպման համար: Այդ նպատակով, մասնավորապես, անհրաժեշտ է պարբերաբար նորացնել և համալրել Սփյուռքի հայկական գրադարանային ֆոնդերը, նաև զարգացնել հայ գրականության, մշակույթի, պատմության, ռազմարվեստի, դիցաբանության և այլ ուղղվածություններ ունեցող համահայկական ինտերնետային կայքերը: Մշակել ծրագրեր ու թվայնացնել հայ գրականության բարձրարժեք ստեղծագործությունները՝ դրանք մատչելի դարձնելով հայ երիտասարդի համար: Սփյուռքի համայնքների առաջնային հիմնախնդիրներից է Հայաստանի (ինչպես նաև ԼՂՀ և Սփյուռքի) մասին հավաստի և լիարժեք տեղեկատվության մատչելիությունը: Թեև Սփյուռք հեռարձակվող հեռուստահաղորդումները և մի շարք ինտերնետային ու տպագիր լրատվամիջոցներ որոշ չափով լուծում են այդ խնդիրը, այդուհանդերձ, արտերկրում բնակվող հայերի հիմնական մասը բավարար չափով իրագեկ չէ Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային-հոգևոր կյանքին: Հայաստանի մասին տեղեկատվական հոսքերում հաճախ առկա է նաև ապատեղեկատվություն, որն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի, ԼՂՀ-ի, ինչպես նաև Սփյուռքի տեղեկատվական անվտանգության խնդիրներին: Տեղեկատվական դաշտում բացակայում են նաև Հայաստանի ու Հայության միասնական իմիջի ձևավորման մեխանիզմները: ՀՀ կառավարությունը պետական

լիազոր մարմինների միջոցով մշակում ու հետևողականորեն իրականացնում է ԼՂՀ-ում և օտար պետություններում հայկական ազգային մշակութային արժեքների պաշտպանության հայեցակարգ, որը, մասնավորապես, սահմանում է ԼՂՀ-ում և արտերկրում ազգային պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանության, օգտագործման ու համալրման սկզբունքները և չափորոշիչները:

62. ՀՀ մշակույթի նախարարությունը, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների ու միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության բնագավառային առանձին գործառնություններ: Վերջիններս ուղղված են Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում մշակութային համագործակցությանն ու փոխանակումների զարգացմանը, ազգային մշակութային ժառանգության հարստացմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը և ծառայությունների մատուցմանը, ազգային մշակութային արժեքների հետ ուղղակի կամ անուղղակի հաղորդակցվելու ազատ ու մատչելի պայմաններ ստեղծելուն, միջազգային նորմերի շրջանակներում այլ պետությունների տարածքներում գտնվող ազգային մշակութային արժեքների պահպանությանը: Նախարարությունը տեղեկություններ է հավաքագրում համահայկական նշանակության նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության մասին: Մշակում է ԼՂՀ և օտար երկրներում հայկական ազգային մշակութային արժեքների պաշտպանության հայեցակարգը, մասնակցում է մշակույթի բնագավառում Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական ռազմավարական և նպատակային ծրագրերի մշակմանը և կազմակերպում է դրանց իրականացումն ու մոնիտորինգը: Նախարարությունը մասնակցում է արտերկրում թանգարանային և գրադարանային համահայկական նշանակության հավաքածուների հաշվառմանն ու ուսումնասիրմանը, նպաստում է դրանց պահպանմանը և համալրմանը, համահայկական գրադարանային-տեղեկատվական ցանցերի ստեղծմանը, համահայկական նշանակության ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտների հավաքագրմանն ու ուսումնասիրմանը: Նախարարությունն աջակցում է համահայկական փառատոների, ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, աճուրդների, գիտաժողովների, համաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպմանն ու ապահովում է Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում մշակութային քաղաքականության քարոզչությունը գանգվածային լրատվության միջոցներով:

63. ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում համագործակցելով, ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության բնագավառային գործառնություններ: Վերջիններս ուղղված են այս ոլորտում ՀՀ արտաքին քաղաքականության իրականացմանը, միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքի շրջանակներում Հայաստանի, ԼՂՀ և օտար պետություններում բնակվող հայերի շահերն ու իրավունքները պատշաճ և հետևողականորեն ներկայացմանը, ինչպես նաև պետական մարմիններին Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովմանը: Մասնավորապես, Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում համակարգում է միջազգային հարաբերությունների և կապերի ոլորտում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական ու տարածքային մարմինների գործունեությունը, իրականացնում է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով նախարարությանը վերապահված գործառնություններ, օտարերկրյա պետություններում ապահովում է Հայաստանի

մասնակցությունը Հայաստան-Սփյուռք գործակցությանն առնչվող միջազգային կազմակերպություններում, կոնֆերանսներում, խորհրդակցություններում և այլ հավաքներում, աջակցում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների տարածմանը: Նախարարությունը նպաստում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության միջազգային գործիքների արդյունավետ կիրառմանը, պրակտիկայի ամփոփմանն ու դրանց կատարելագործմանը՝ միջազգային իրավունքի շրջանակներում:

- 64. ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը**, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության բնագավառային գործառնություններ: Վերջիններս ուղղված են Սփյուռքի համար ընկալելի տնտեսական քաղաքականության իրականացմանը, գործարար ոլորտում արդի գիտելիքների և հմտությունների, կառավարման ժամանակակից մոդելների, ինովացիոն արդյունքի կիրառման համակարգերի ներդրման, գործարար մշակույթի ձևավորման և բարձրարժեք ու գիտատար ծառայությունների զարգացման գործում Սփյուռքի ներուժի ներգրավմանը, ինչպես նաև Հայաստանում բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը:
- 65. ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը**, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում, համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության առանձին գործառնություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունից արտագաղթած բնակչության ռեէմիգրացիայի (հետդարձի), բնակչության վերաբնակեցման ծրագրերի մշակմանն ու իրագործմանը: Իրականացնում է այլ պետությունների մեծ հայ համայնքներ ունեցող քաղաքների, տարածաշրջանների և Հայաստանի մարզերի և քաղաքների միջև համապատասխան գործակցության խթանման աշխատանքներ և ծրագրեր (քույր քաղաքներ)՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:
- 66. ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությունը**, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում, համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հետ առնչվող գործառնություններ: Դրանք ուղղված են ՀՀ սահմաններից դուրս գտնվող ՀՀ կազմակերպությունների և քաղաքացիների անվտանգության ապահովմանը, աջակցում է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու, ՀՀ տարածք մուտք գործելու և դրա սահմաններից դուրս գալու, ինչպես նաև վերջիններիս այդ տարածքում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը:
- 67. ՀՀ ոստիկանությունն** իր նպատակների և խնդիրների շրջանակներում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է մարդու իրավունքների ու ազատությունների, սեփականության բոլոր ձևերի պաշտպանության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ գործառնություններ: Կազմակերպում և հսկում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրավորման, հաշվառման, օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ սփյուռքահայերի և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, տարածքում գտնվելու, տարանցիկ տեղաշարժվելու, տարածքից դուրս գալու, երկքաղաքացիության շնորհման հետ կապված

օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայությունների և մարմինների գործունեությունը:

68. ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունը, իր կանոնադրական նպատակների և խնդիրների շրջանակներում, համագործակցելով ՀՀ պետական կառավարման այլ մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, իրականացնում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության առանձին գործառույթներ: Դրանք ուղղված են Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում երիտասարդների հայրենասիրական ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը, սպորտային ու երիտասարդական համագործակցության փոխանակումների զարգացմանը՝ համահայկական երիտասարդական, մանկապատանեկան և մարզական միջոցառումների կազմակերպմանը, գիտամեթոդիկական աշխատանքների, աշխատությունների, համաժողովներին, սեմինարներին համահայկական երիտասարդական շինջոկատների, փոխայցելությունների կազմակերպմանը:

69. Քաղաքացիական հասարակության արդյունավետ և ընդգրկուն մասնակցությունը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակմանն ու դիտարկմանը իրականացվում է հնարավորինս մեծ թվով սփյուռքյան և հայաստանյան հասարակական կազմակերպություններ, կառույցներ ընդգրկելու միջոցով:

70. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունը **2009-2012** թթ. միտված է այն իրականացնող մարմինների հետագա ինստիտուցիոնալ զարգացմանը, գործունեության համակարգմանը, այդ թվում՝ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ոլորտում գործառույթներ իրականացնող պետական մարմիններում ռազմավարական պլանավորման ներդրմանը:

2.5. Մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, Հայաստան-Սփյուռք գործակցության մասին տեղեկատվության կառավարումը

71. Հայաստան-Սփյուռք գործակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գործակցության զարգացման պետական քաղաքականությունն իրականացնող մարմինների մասնագետների մասնագիտական կարողություններով, որն ապահովում է Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների պատրաստման, վերապատրաստման, շարունակական կրթության անհրաժեշտ համակարգի ներդրման միջոցով:

72. Մասնագետների ուսուցումը նախատեսվում է հիմնականում կազմակերպել պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այդ նպատակով հիմնվում են ամբիոններ, ֆակուլտետներ, բաժիններ, «Հայագիտություն» մասնագիտությունը ներառվում է պետության կողմից ֆինանսավորվող բակալավրի և մագիստրոսի պատրաստման ծրագրերում: Ավելացնում են գիտական թեզերի պատրաստման թեմաները, կատարվում են Հայաստան-Սփյուռք գործակցության առկա հիմնախնդիրներին վերաբերող հետազոտություններ:

73. Հայաստան-Սփյուռք գործակցության թեմատիկ մասնագիտական սեմինար-դասընթացների անցկացման նպատակով օգտագործվում են պետական մարմիններին կից գործող մասնագիտական վերապատրաստման կառույցների և ուսումնական կենտրոնների կարողությունները, ինչպես նաև ներգրավվում են օտար պետությունների հայագիտական կենտրոնների ու միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցները: Ներկայացուցչական, կրթական և մշակութային գործառույթներ իրականացնող մասնագետների համար վերապատրաստման ծրագրերը, մասնավորապես, ներառվում են նաև բազմամշակութային արդյունավետ հաղորդակցության, կոնֆլիկտների կառավարման, հոգևոր

և ծիսական արարողակարգերին վերաբերող, կրթության և դաստիարակության, կրթական ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների մշակման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման հմտություններ:

74. Կարևորվում է նաև Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների ուսումնական այցերի և կարճաժամկետ գործուղումների կազմակերպումը Սփյուռքի հետ գործակցության լավագույն փորձ ունեցող երկրների համապատասխան հաստատություններ, ինչպես նաև այդ երկրների համապատասխան մասնագետների այցերը Հայաստան՝ Սփյուռքի հետ գործակցության զարգացման հիմնահարցերով գիտագործնական պարապմունքներ անցկացնելու համար:

75. Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ համակողմանի, ամբողջական և մատչելի վիճակագրության համակարգը գործնականում ձևավորված չէ: Չի գործում նաև Հայաստան-Սփյուռք գործակցության տարբեր գործառույթների, Սփյուռքի հայկական կառույցների ու կազմակերպությունների, դրանց խնդիրների և կարիքների մասին մանրամասն տեղեկությունների ամփոփման, փոխանակման և հաշվետվությունների համակարգը:

76. Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների պատրաստման, վերապատրաստման, տեղեկատվության կառավարման գերակա ուղղություններն են՝ մասնագետների ուսուցման և շարունակական վերապատրաստման համակարգի ներդրումը, կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործումը, Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգի բարելավումը:

Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) ներդնել Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների ուսուցման համակարգ՝ այդ գործընթացին ներկայացվող պահանջների սահմանման, բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրոսական ծրագրերում՝ Հայագիտություն, Համայնքների պատմություն՝ մասնագիտություններ ներառելու, սփյուռքագիտության և հարակից թեմաներով ծրագրերի մշակման, ներդրման ու ֆինանսավորման կարգը հաստատելու, բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացման, ուսուցման և աշխատանքների լուսաբանման համակարգերի ներդրման իրավական հիմքերի ձևավորման միջոցով,

բ) ներդնել Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների շարունակական վերապատրաստման համակարգ՝ վերապատրաստման ծրագրերի կազմակերպման կարգը հաստատելու, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության իրականացման մեջ ներգրավված պետական մարմիններին կից մասնագետների վերապատրաստման հաստատությունների կարողությունները գնահատելու, վերապատրաստման ենթակա պաշտոնյաների շրջանակը սահմանելու, շարունակական վերապատրաստման ծրագրերը և ուսումնական ձեռնարկները՝ ըստ մասնագիտությունների հաստատելու միջոցով,

գ) ապահովել Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործումը՝ մասնագետների ուսուցման ու վերապատրաստման կարիքների գնահատման և ներգրավված կառույցների կարողությունների շարունակական զարգացման, ուսուցման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ապահովելու միջոցով,

դ) բարելավել Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում գործառույթներ իրականացնող առանձին մարմինների միջև՝ Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի համապատասխան կառույցների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ Հայաստան-Սփյուռք գործակցության

շրջանակներում տվյալների փոխանակման ընթացակարգերի հստակեցման, վիճակագրության համակարգի ամբողջականացման, դրա վերլուծության մեթոդիկայի մշակման ու ներդրման, պաշտոնական վիճակագրության հետ դրանց արդյունքների համադրման, վերլուծության և կիրառման միջոցով:

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

3.1. ՀՀ քաղաքացիության տրամադրման, մուտքի-ելքի և կացության կարգավորում

77. Տարբեր պետություններում քաղաքացիության ձեռքբերման հիմքերի տարբերությունները և համաշխարհայնացման գործընթացները անխուսափելիորեն հանգեցնում են երկու և ավելի պետությունների քաղաքացիություն ձեռք բերելու ցանկություն ունեցող անձանց թվի աճին: Ներկայումս շատ պետություններ ընդունում կամ առնվազն հանդուրժում են սեփական քաղաքացիների՝ այլ երկրի քաղաքացիության ձեռքբերումն առանց սկզբնական քաղաքացիության կորստի: Երկքաղաքացիության ինստիտուտն ամրագրված է բազմաթիվ երկրների հիմնարար օրենքներում, մի շարք միջազգային կոնվենցիաներում, երկկողմ և բազմակողմ պայմանագրերում:
78. Հայաստանում 2005թ. նոյեմբերի 27-ին իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածով թույլատրվեց երկքաղաքացիության իրավունք, ըստ որի երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով: Հայաստանում երկքաղաքացիության սահմանադրական ինստիտուտը ՀՀ կողմից ընդունված միակողմանի պարտավորություն է՝ միջազգային իրավունքի նորմերի շրջանակում և միտված է ազգահավաքության խթանմանը, համահայկական ներուժի ձևավորմանն ու ՀՀ տնտեսության զարգացմանը, աշխարհասփյուռ հայության միավորմանը, Սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական ու մշակութային կյանքի զարգացմանը:
79. Օրենսդրորեն տրվել է Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու սահմանումը, ըստ որի, երկրորդ պետության քաղաքացիության առկայությունը որևէ կերպ չի ազդում քաղաքացու իրավունքների և պարտականությունների ծավալի վրա: «ՀՀ ընտրական օրենսգրքում 2007 թ. փետրվարի 26-ին կատարված փոփոխություններով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող երկքաղաքացիները ընտրություններին չեն մասնակցում: Ընդհանուր առմամբ, ներկայումս ընդունված մոտեցման համաձայն, երկքաղաքացիների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները նախատեսվում է սահմանել միջպետական համաձայնությունների մակարդակով՝ միջազգային պայմանագրերում: Սակայն մինչ այժմ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև երկքաղաքացիության վերաբերյալ որևէ համաձայնագիր ստորագրված չէ: Միաժամանակ, օրենսդրական առանձին կարգավորման առարկա չեն դարձել նաև երկքաղաքացիների հարկման ու զինապարտության առանձնահատկությունները:
80. Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Հայաստանի Հանրապետություն մուտքի-ելքի հիմնական կարգավորումներն առավելապես վերաբերում են Հայաստանի Հանրապետություն մուտքի վիզաների և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի տրամադրմանը: Որպես կանոն, Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաները տրվում են Հայաստանում մինչև 120 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը մինչև 60 օր ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ («Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք):

- 81.** Հայաստանում օտարերկրացիների համար սահմանված է կացության երեք կարգավիճակ.
- ա) ժամանակավոր, որը տրվում է մեկ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ,
 - բ) մշտական, որը տրվում է հինգ տարի ժամկետով՝ Հայաստանում մերձավոր ազգականներ ունեցող, բնակարանով և գոյության միջոցներով ապահովված անձին,
 - գ) հատուկ, որը տրվում է տասը տարի ժամկետով՝ ծագումով հայ օտարերկրացիներին: Կացության կարգավիճակին վերաբերող ՀՀ օրենսդրությունն ընդհանուր առմամբ նպաստում է հայրենադարձությանը և բիում է սփյուռքահայության շահերից:
- 82.** Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության գործիքների արդյունավետ կիրառման գերակա ուղղություններն են. երկքաղաքացիների իրավունքների ու պարտականությունների օրենսդրական տարբերակումը, ՀՀ մուտքի-ելքի կարգավորման ընթացակարգերի բարելավումը, վերինտեգրման, հպատակության և հայրենադարձության, ներգաղթի ներպետական օրենսդրական կարգավորումը, համահայկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են. երկքաղաքացիների իրավունքների ու պարտականությունների հստակեցումը, երկքաղաքացիների իրավունքների և պարտականությունների առանձնահատկությունների օրենսդրական կարգավորումը, մեծ հայ համայնք ունեցող պետությունների հետ երկքաղաքացիության վերաբերյալ բանակցելը և միջպետական համաձայնագրեր կնքելը:

3.2. Միջազգային իրավական գործիքների արդյունավետ կիրառումը

- 83.** Հայկական համայնքները գտնվում են իրավական տարբեր միջավայրերում, ունեն իրավական տարբեր կարգավիճակներ՝ պայմանավորված միջազգային գործիքներով, երկկողմ և բազմակողմանի հարաբերություններով, տվյալ երկրում հայկական կողմի իրավունքների պաշտպանությանը նպաստող ազգային օրենսդրությամբ և տվյալ երկրի միջազգային պարտավորություններով:
- 84.** Օտար պետությունում բնակվող հայերի իրավական կարգավիճակը պայմանավորված է կոնկրետ երկրի ազգային օրենսդրությամբ և նորմերով:
- 85.** Ազգային փոքրամասնության իրավական կարգավիճակն առանձին երկրում կախված չէ անձանց կարգավիճակից (քաղաքացի, կացության կարգավիճակ ունեցող անձ, փախստական և այլն), ինչպես նաև այդ երկրում գտնվելու ժամկետներից (մշտական բնակություն հաստատած անձիք, սեզոնային միգրանտ աշխատողներ և այլն): Ազգային փոքրամասնությունների իրավունքները սահմանվում են ունիվերսալ միջազգային իրավական ակտով՝ **1966թ.** ընդունված Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրով, ըստ որի սեփական մշակույթը պահպանելու, կրոնը դավանելու ու դրա ծեսերը կատարելու, նաև մայրենի լեզուն գործածելու ազգային փոքրամասնությունների իրավունքը չի կարող մերժվել: Այս նորմն ունի նաև միջազգային սովորության իրավունքի բնույթ, այսինքն՝ պարտադիր է նաև դաշնագրի անդամ չհանդիսացող պետությունների համար: Դաշնագիրը պետություններին չի պարտադրում ակտիվ գործունեություն իրականացնել փոքրամասնությունների իրավունքների իրականացումն ապահովելու համար, թեպետ պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այս նորմը խախտելուց և ապահովել իրավական պաշտպանության հնարավորություն՝ այլ անձանց կողմից փոքրամասնության իրավունքների խախտումներից: Համապատասխանաբար, հենց իրենք՝ ազգային փոքրամասնությունները, պետք է միջոցներ ձեռնարկեն պահպանելու համար իրենց մշակույթը, դավանելու իրենց կրոնը և կատարելու դրա ծեսերը, ինչպես նաև գործածելու մայրենի լեզուն:
- 86.** Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ԱՊՀ շրջանակներում «Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիային (**1994թ.**): «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական

Խարտիան (1992թ.) և «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան (1995թ.) ամրագրում են փոքրամասնությունների լրացուցիչ իրավունքներ և երաշխիքներ (հատկապես, լեզվի գործածման հետ կապված երաշխիքներ, ներառյալ պետության պարտականությունը՝ զարգացնելու լեզվի ուսուցումը, պաշտպանելու լեզուն գործածելու հնարավորությունը և այլն):

87. Փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող տարածաշրջանային միջազգային պայմանագրերը վավերացված են սահմանափակ թվով պետությունների կողմից: Մասնավորապես, Վրաստանը, ուր հայ փոքրամասնության իրավունքների պահպանման խնդիրն առավել արդիական է, չի անդամակցում «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական Խարտիային:
88. Օտար երկրներում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում Հայաստանի Հանրապետությունը կարևորում է միջպետական համագործակցությունը, ինչպես նաև համակողմանի գործակցությունը միջազգային կառույցների, այդ թվում՝ Եվրոպայի Խորհրդի ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովի և Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեի հետ:
89. Փախստականի իրավական կարգավիճակը կիրառվում է այն անձի նկատմամբ, որը ռասայի, կրոնի, քաղաքացիության, սոցիալական որոշակի խմբի պատկանելու կամ քաղաքական համոզմունքների հիմքով հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր մտավախության ուժով գտնվում է իր քաղաքացիության պետությունից դուրս և չի կարող, կամ նշված մտավախությունից ելնելով չի ցանկանում ապավինել այդ պետության պաշտպանությանը և չի կարող վերադառնալ այդ երկիր (նույնը կիրառելի է քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ՝ իրենց բնակության երկրի մասով): Ներկայումս առանձին երկրներում բնակվող որոշ թվով հայեր փախստականներ են կամ նրանց փախստականի կարգավիճակ տրամադրելու հարցը գտնվում է քննարկման փուլում: Փախստականի կարգավիճակ ունեցող հայերին աջակցելու միջազգային-իրավական խնդիրները հիմնականում վերաբերում են այդ կարգավիճակի համար սահմանված իրավունքների և երաշխիքների պահպանմանը:
90. Հայաստանի Հանրապետությունն աջակցում է հայերի հայրենադարձությանը՝ անկախ նրանց մեկնման կամ ժամանման երկրից: Հայաստանի Հանրապետությունը նպաստում է օտար պետություններում գտնվող հայ փախստականների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը՝ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու միջոցով, աջակցում է կարգավիճակի տրամադրման հարցի առավել արդյունավետ ու արագ լուծմանը դիվանագիտական կապերի միջոցով: Այս առումով կարևորվում է համագործակցությունը Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի հետ: Փախստական հայերի հայրենադարձությանն աջակցելու առումով Հայաստանի Հանրապետությունը կարևորում է միջազգային կառույցների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի և Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համակողմանի համագործակցությունը, ինչպես նաև աջակցությունն այս ոլորտում գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ Եվրոպական սոցիալական խարտիայի կիրառման հարցում: Հայաստանի Հանրապետությունում կարևորվում է նաև համագործակցությունը Միգրացիայի հարցերով Եվրոպական կոմիտեի հետ, որը պատասխանատու է միգրացիայի ոլորտում Եվրախորհրդի անդամ երկրների միջև համագործակցության ապահովման համար:
91. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է նաև քաղաքացիների մուտքի և ժամանակավոր բնակության համար արտոնյալ պայմաններ սահմանող երկկողմ համաձայնագրերը: Հայաստանի Հանրապետությունն նմանատիպ համաձայնագրեր ունի մի շարք պետությունների հետ, այդ թվում՝ ԱՂՀ շրջանակներում: Նման համաձայնագրերը, որպես կանոն, ազատ (առանց մուտքի վիզա ստանալու անհրաժեշտության) մուտքի հնարավորություն և ժամանակավոր բնակության համեմատաբար արտոնյալ պայմաններ են սահմանում:

Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում միջազգային իրավական գործիքների արդյունավետ կիրառման գերակա ուղղություններն են. առանձին պետություններում ազգային փոքրամասնությունների, փախստականների, մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև հայրենադարձության հիմնախնդիրները:

3.3. Օրենսդրական և միջխորհրդարանական գործունեություն

- 92.** ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման շրջանակներում օրենսդրության կատարելագործումը և միջխորհրդարանական համագործակցության ընդլայնումը:
- 93.** Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը տարբեր ոլորտներում մեծապես պայմանավորված է անհրաժեշտ օրենսդրական կարգավորման առկայությամբ: Այս առումով կարևորվում է տարբեր ոլորտներում Հայաստան-Սփյուռք գործակցության առանձին խնդիրները կարգավորող օրենսդրության մշակումը՝ կրթական, մշակութային, լեզվական, կրոնական, քաղաքական խտրականության դրսևորումների բացառումը: Անհրաժեշտ է օրենսդրորեն կանոնակարգել այլատյացության, հակահայկական քարոզչության դրսևորումները:
- 94.** Հայերի հայրենադարձությունը խթանելու գործում ՀՀ կառավարությունը կարևորում է երկքաղաքացիությանն առնչվող օրենսդրության շարունակական կատարելագործումը, երկքաղաքացիների իրավունքների ու պարտականությունների օրենսդրական տարբերակումը, ՀՀ մուտքի-ելքի օրենսդրական կարգավորման բարելավումը, վերաինտեգրման, հայրենադարձության և ներգաղթի օրենսդրության մշակումը:
- 95.** Համահայկական էլեկտրոնային շտեմարանի, Սփյուռքում կրթական համակարգերի ներդրման, հայագիտության բնագավառում հեռավար ուսուցման, մշակութային ժառանգության պահպանման, պաշտպանության, զարգացման և այն աշխարհին ներկայացնելու խնդիրների արդյունավետ լուծումը նույնպես պահանջում է օրենսդրական կարգավորման հստակեցում և հարակից օրենսդրության կատարելագործում: Անհրաժեշտ է աստիճանաբար կանոնակարգել «Հայագիտական համակարգի» մշակման, ներդրման և գործունեության աշխատանքները: Օրակարգային է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործումը՝ Սփյուռքի և սփյուռքահայերի նկատմամբ:
- 96.** Օրենսդրական կարգավորման կարիք ունեն նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման շրջանակներում ձևավորվող համահայկական կառույցներն ու դրանց գործունեությունը: Այս առումով կարևորվում է Ազգային խորհրդի գործունեության, պետական, հասարակական և միջազգային կառույցների հետ դրա համագործակցության ու այլ խնդիրների կարգավորումն առանձին օրենքով՝ ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համահունչ: Օրենսդրական կարգավորման խնդիրներ կան նաև համազգային այլ կառույցների Համահայկական համաշխարհային ներդրումային հիմնադրամի և Համահայկական բանկի ստեղծման առնչությամբ՝ միջազգային իրավունքի նորմերին ու ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- 97.** ՀՀ կառավարությունը մեծապես կարևորում է նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանն ուղղված միջխորհրդարանական գործունեությունը միջազգային ու միջպետական կառույցների շրջանակներում, այդ թվում՝ խորհրդարանական բարեկամական խմբերի օգնությամբ առանձին երկրների պառլամենտներում և միջխորհրդարանական հանձնաժողովներում Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնախնդիրների բարձրացման ու քննարկման միջոցով:
- 98.** Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման մի շարք խնդիրների լուծմանը կնպաստեն Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների Միջխորհրդարանական Վեհաժողովի (ԱՊՀ ՄՄՎ), Եվրոպայի Անվտանգության և

Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) Խորհրդարանական Վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ), Միջխորհրդարանական միության (ՄՄ) և Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի (ՄՕՏՀ ԽՎ) շրջանակներում համագործակցությունը պետությունների ազգային պառլամենտները ներկայացնող խորհրդարանականների հետ: Այս առումով կարևորվում է այս կառույցների շրջանակներում հակամարտությունների կանխմանն ու կարգավորմանը, անդամ-երկրներում բնակվող հայերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ինստիտուտների ամրապնդմանն ու համախմբմանն ուղղված հայ պառլամենտականների գործունեությունը, ինչպես նաև անդամ-երկրներում բնակվող հայերի ազգային տնտեսական շահերի, հայկական համայնքների փոքրամասնության իրավունքների և անվտանգության խնդիրների, հայ միգրանտների հումանիտար խնդիրների հետևողական արծարծումը:

99. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը մեծապես կնպաստի նաև Հայաստանի, ԼՂՀ և աշխարհի երկրների պառլամենտների հայ պատգամավորների մասնակցությամբ Համահայկական միջխորհրդարանական վեհաժողովի ստեղծումը՝ վերը նշված խնդիրների համակարգման և Հայաստան-Սփյուռք գործակցության միջազգային իրավական գործիքների կատարելագործմանն ու արդյունավետ կիրառմանն նպաստակով:

3.4. Հայաստան-Սփյուռք գործակցությանը քաղաքացիական հասարակության աջակցությունը

100. ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-Սփյուռք գործակցությանը քաղաքացիական հասարակության աջակցությունը՝ քաղաքացիական հասարակության կառույցներին այս ոլորտում պետական քաղաքականության իրականացման առանձին գործառույթների պատվիրակման, Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում սոցիալական համագործակցության զարգացման, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակմանն ու վերահսկողության գործընթացներում քաղաքացիների և հասարակական միավորումների մասնակցության միջոցով:

101. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության շրջանակներում ծրագրվող կրթական, դաստիարակչական և իրավապաշտպան գործունեության, հայկական համայնքների, որպես ազգային փոքրամասնության կամ փախստականների իրավունքների պաշտպանության հիմնական գործառույթներն առավել արդյունավետ կարող են իրականացվել հենց քաղաքացիական հասարակության ներգրավմամբ և պետության կողմից առանձին գործառույթների պատվիրակման միջոցով: Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում գործող հասարակական և ոչ առևտրային կազմակերպությունների դերն էական է նաև միգրացիայի, հայրենադարձության, վերաբնակեցման, վերաինտեգրման, ընդունող երկրում հայ միգրանտներին սոցիալական աջակցության և սոցիալականացման, թրաֆիքինգի կանխարգելման գործառույթներում: Կարևորվում է մշակութային տարբեր միջավայրերում և համայնքներում ապրող հայերի ճանաչողական, միջմշակութային և կրթական գործընթացների հասարակական կազմակերպությունների գործունեությունը Հայաստանում և Սփյուռքում: Էական է Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի հասարակական կազմակերպությունների ներգրավումը գիտելիքի և փորձի փոխանակմանն ու համագործակցության ծրագրերում:

102. ՀՀ կառավարությունը նպաստում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և սոցիալական համագործակցության հարուստ փորձ ունեցող Սփյուռքի գործարարների ու հասարակական գործիչների գիտելիքների և փորձի տարածմանն ու սոցիալական համագործակցության մշակույթի արմատավորմանը Հայաստանում և ԼՂՀ-ում ու ակնկալում է այս գործում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը:

103. Նկատի ունենալով տեղեկատվական արդի տեխնոլոգիաների զարգացումը, ՀՀ կառավարությունը խրախուսում է Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի հիմնախնդիրների վերաբերյալ բլոգերների ակտիվությունը, նպաստում է հայկական լրատվամիջոցների սփռմանն ու տարածմանը տարբեր երկրներում, ինչպես նաև խթանում է Սփյուռքի լրատվամիջոցների տեղեկատվության հասանելիությունը Հայաստանում և ԼՂՀ-ում: Այս առումով կարևորվում է Հայաստանին, ԼՂՀ-ին և Սփյուռքին վերաբերող առավել հրատապ հարցերի քննարկման նպատակով Հայաստան-Սփյուռք կանոնավոր հեռուստակամուրջների կազմակերպումն ու արբանյակային կապուղիներով սփռումը և այս գործում քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավումն ու նրանց արդյունավետ համագործակցությունը պետական կառավարման մարմինների և գործարարների հետ: ՀՀ կառավարությունը նպաստում է նաև ինտերնետային տեսաշտեմարաններում ու համացանցերում կրթական, հայրենական և այլ տեսանյութերի տեղադրմանն ու տարածմանը:

104. ՀՀ կառավարությունը կարևորում է քաղաքացիական հասարակության կողմից Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանն աջակցելու կարողությունների զարգացումն ու գործուն մեխանիզմների ներդրումը: Այս առումով հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ քաղաքացիական հասարակության կառույցները Սփյուռքում ձևավորվել և գործում են հիմնականում հայկական առանձին համայնքների խնդիրների լուծման առաքելությամբ: Համահայկական խնդիրների շուրջ ծավալվող քաղաքացիական հասարակության կառույցների գործունեությունը ներկայումս առավելապես առնչվում է ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին, ինչպես նաև մասնագիտական միությունների գործունեությանը: Ուստի, անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստան-Սփյուռք գործակցության տարբեր ուղղություններում քաղաքացիական հասարակության ներգրավման առկա ձևերն ու մոդելները, փորձն ու սերտած դասերը:

105. Հայաստան-Սփյուռք գործակցության իրականացման գործընթացում կարևորվում է քաղաքացիական հասարակության կողմից դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը դիտարկման միջոցով, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության վերանայման ու գնահատման գործընթացում դիտարկման արդյունքների կիրառումը: Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման դիտարկման խնդիրներն առանձին ոլորտներում ուղղված են գործակցության թափանցիկությանը, հրապարակայնությանը, հաշվետվությունների տրման և արդյունավետության բարձրացմանը:

106. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը քաղաքացիական հասարակության աջակցության ուղղություններն են. այս ոլորտում պետական քաղաքականության մշակմանը և վերահսկողությանը քաղաքացիների ու հասարակական միավորումների մասնակցությունը, քաղաքականության իրականացման առանձին գործառնությունների պատվիրակումը քաղաքացիական հասարակության կառույցներին և սոցիալական համագործակցության զարգացումը: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) **ներդնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման վերաբերյալ որոշումների կայացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության գործուն մեխանիզմներ՝** Հայաստան-Սփյուռք գործակցության սկզբունքների, նպատակների և խնդիրների հանրային իրազեկման, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության լուսաբանման, Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում պատասխանատու մարմիններին կից առանձին խորհուրդներում ու հանձնաժողովներում Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման, մասնակցության ընթացակարգերի սահմանման, միջոցառումների նախաձեռնությունների քննարկումների, վերաբերյալ Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի հասարակարկական կառույցների ուսումնասիրությունների, եզրակացությունների, հիմնավորումների, հանրային կարծիքի արդյունքները հաշվի առնելու և քննարկման առարկա դարձնելու, օրենսդրական նախաձեռնությունների և որոշումների

նախապատրաստման փուլում քաղաքացիական հասարակության ներգրավման, շահագրգիռ սոցիալական կամ մասնագիտական առանձին խմբերի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու, պատասխանատու բոլոր մարմիններում էլեկտրոնային կապի միջոցներով խորհրդատվության ապահովման, զանգվածային լրատվության միջոցներով միջոցառումների լուսաբանման, զանգվածային լրատվամիջոցներով պարբերական հաղորդումների, հրապարակումների, ինտերնետային պաշտոնական կայքերի, հանրային քննարկումների, լսումների, տպագիր նյութերի, համաժողովների կազմակերպման, քաղաքացիական հասարակության կարողությունները Հայաստան-Մփյուռք գործակցության իրականացման գործում զարգացնելու, քաղաքացիական հասարակության կառույցների համար վերապատրաստման ծրագրերի ու դասընթացների կազմակերպման միջոցով:

բ) **Պատվիրակել Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման ոլորտում պետական քաղաքականության իրականացման առանձին գործառույթներ քաղաքացիական հասարակության կառույցներին՝** ուսումնասիրությունների կատարման նպատակով դրամաշնորհների, կրթական, դաստիարակչական ծրագրերի համար պետական պատվերների տրամադրման, օտար պետություններում բնակվող հայերի հայրենադարձության, վերաբնակեցման, վերաինտեգրման, ընդունող երկրում հայ միգրանտներին սոցիալական աջակցության և սոցիալականացման, թրաֆիքինգի կանխարգելման ծրագրերին պետական աջակցության, հայաստացույցության կանխարգելման, ինչպես նաև մշակութային տարբեր միջավայրերում ու համայնքներում ապրող հայերի միջմշակութային ճանաչողական կրթական ծրագրերին պետական աջակցության, համահայկական նշանակության խնդիրներով զբաղվող վերլուծական կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանն աջակցելու միջոցով:

գ) **Աջակցել քաղաքացիական հասարակության կառույցների կողմից Հայաստանի, ԼՂՀ-ի և Մփյուռքի միջև գիտելիքի ու փորձի փոխանակման և համագործակցության ծրագրերի մշակմանն ու իրականացմանը՝** երեխաների և երիտասարդների փոխայցելությունների կազմակերպման ծրագրերին պետական աջակցության, Մփյուռքի կազմակերպություններին ազգային և միջազգային միջոցառումներում ընդգրկելու, հասարակական կազմակերպությունների համահայկական ցուցահանդեսների կազմակերպմանն օժանդակելու, հայկական մասնագիտական ասոցիացիաների գործունեությանն ու համագործակցությանն աջակցելու, Հայաստանում և օտար պետություններում գործող հայկական ոչ առևտրային կազմակերպությունների ռեեստր ստեղծելու, աշխարհի հեղինակավոր ոչ առևտրային կազմակերպություններում գործող հայերի ռեեստր ստեղծելու, Հայաստանում և ԼՂՀ-ում սոցիալական համագործակցության մշակույթի արմատավորման գործում Մփյուռքի գործարարներին ու հասարակական գործիչներին ներգրավելու, Հայաստանի, ԼՂՀ-ի և Մփյուռքի շահերի պաշտպանության կազմակերպությունների համագործակցությանը նպաստելու, շահերի պաշտպանության կազմակերպությունների համահայկական ֆորում ստեղծելու, տարբեր երկրներում գործող հայկական հասարակական կազմակերպությունների համար շահերի պաշտպանության գործունեության և ռեսուրսների հայթայթման ուսուցում կազմակերպելու ու նման կազմակերպությունների միջև փորձի փոխանակմանը նպաստելու, կանոնավոր հեռուստակամուրջների կազմակերպմանը և արբանյակային կապուղիներով սփռմանն աջակցելու, ինտերնետային տեսաշտեմարաններում և համացանցերում կրթական, կրթալուսավորչական և այլ տեսանյութերի տեղադրմանն ու տարածմանն աջակցելու միջոցով:

դ) **Զարգացնել քաղաքացիական հասարակության կողմից Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացմանն աջակցելու կարողությունները՝** տարբեր ուղղություններով քաղաքացիական հասարակության ներգրավման առկա ձևերն ու մոդելները, փորձը

շարունակաբար ուսումնասիրելու և քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների զարգացման կարիքները գնահատելու, հասարակական կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը պետական աջակցության առկա մեխանիզմների կիրառման ու գործուն նոր մեխանիզմներ ներդնելու միջոցով:

3.5. Հայագիտության զարգացումը

107. Հայագիտությունը գիտությունների համակարգ է, որը ձևավորվել է **XVIII**դ. սկզբին, թեև Հայաստանի և հայերի հետաքրքրությունը հայագիտության ոլորտում սկսվել է հնագույն ժամանակներից:
108. Մինչև **1918**թ. հայագիտությունը հիմնականում զարգացել է Հայաստանից դուրս՝ հայկական համայնքներներում, Ռուսաստանի, Եվրոպական և արևմտյան երկրների համալսարաններում: Ստեղծվել են հայագիտության նշանավոր կենտրոններ: Հայ ազգագրության, բանահյուսության ու պատմության ուսումնասիրություններն առանձնապես զարգացել են **1870**-ականներից: **XVIII**դ. սկզբից արժեքավոր աշխատանքներ են կատարվել հայ գրականության, իրավագիտության, փիլիսոփայության, երաժշտագիտության բնագավառներում:
109. Հայագիտությունը նոր վերելք ապրեց զարգացման խորհրդային ժամանակաշրջանում, որի հիմնական և առաջնակարգ կենտրոնը Խորհրդային Հայաստանն էր: Հայագիտության զարգացմանը նպաստեցին ոչ միայն գիտնականները, ակադեմիկոսները և գիտական հաստատությունները, այլև պարբերական մի շարք հանդեսներ: Խորհրդային Հայաստանի պատմագիտությունը մեծ ուշադրություն է դարձրել հայ ժողովրդի պատմության, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային բազմաթիվ խնդիրների գիտական խոր ու բազմակողմանի լուսաբանմանը:
110. Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի գիտնականները, լեզվաբանները զբաղվել են հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության, հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, բառարանագրության, ընդհանուր լեզվաբանության, ժամանակակից հայոց լեզվի քերականական կառուցվածքի, լեզվի տեսության և այլ հարցերով: Գրեթե բոլոր բնագավառներում լեզվաբանությունը հասել է նոր նվաճումների, լուծվել են հայոց լեզվի պատմության մի շարք կնճռոտ հարցեր, ամբողջացել է հայերենի պատմահամեմատական քերականությունը, հիմնադրվել ու ծավալվել բարբառների հավաքման և գիտական ուսումնասիրության գործը:
111. Առանձնակի զարգացում է ապրել հնագիտությունը: Ազգագրության ու բանահյուսության բնագավառներում աշխատանքներն իրականացվել են գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների ծրագրված գործունեությամբ: Արվեստագիտության բնագավառում հատկապես **XIX** դարի կեսերից ծավալվել է հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը: Զգալի աշխատանքներ են կատարվել հայ երաժշտագիտության բնագավառում, ստեղծվել է ձայնադարան, ուր հավաքված են ավելի քան **7000** հայկական ժողովրդական երգերի ձայնագրություններ: Խորհրդային տարիներին ձևավորվել է նաև հայ թատերագիտությունը:
112. Անկախ Հայաստանում գործում են հայագիտական մի շարք կենտրոններ և կազմակերպություններ: Ներկայումս հայագիտական կենտրոններ կան կամ հայագիտական աշխատանքներ են կատարվում աշխարհի բազմաթիվ երկրների համալսարանական, ակադեմիական կենտրոններում: Հայագիտական բազմաթիվ թանգարաններ ու գրադարաններ են գործում Հայաստանում և այլ երկրներում: Օտար պետություններում հրապարակվում են հայագիտական մի շարք հանդեսներ:
113. Հայաստան-Սփյուռք գործակցության հայագիտության միասնական և համակարգված քաղաքականության գերակա ուղղություններն են. Հայաստանի Հանրապետությունում և այլ

պետություններում գտնվող հայագիտական հաստատությունների համագործակցությունը, հայագիտական նյութերի հայթայթումը և դրանց համակարգումը, տեղեկատվական միջավայրերի ձևավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) **նպաստել համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ մշակույթի դերի և տեղի ամրապնդմանը՝** համաշխարհային մշակույթին հայկական բազմադարյան մշակութային արժեքների ինտեգրման քաղաքականություն մշակելու, Հայաստանում և օտար պետություններում հայկական մշակութային ու պատմական արժեքների և հուշարձանների գույքագրման, դրանց ֆիզիկական ու բարոյական վիճակի գնահատման, Հայաստանում և օտար պետություններում պետական ու մասնավոր գրադարանների, արխիվային հաստատությունների զարգացման, դրանց համալրման, գույքագրման, թվայնացման, մատենագիտական ձեռնարկների ստեղծման և էլեկտրոնային գրադարանների ձևավորման միջոցով:

բ) **Զարգացնել հայագիտական տեղեկատվայնացման միջավայրը ներքին ու արտաքին համակարգչային ցանցերում՝** արևմտահայերենի նույնականացման, համակարգչային փոխարկման ծրագրերի մշակման, հայագիտության հեռավար ուսուցման կազմակերպման, հայագիտական նյութերի համակարգման («Հայագիտական համակարգ») ծրագրային ապահովման փաթեթ ստեղծելու և այն համաշխարհային ցանցում ներդնելու, տպագիր նյութերի թվայնացման, տեղեկատվական համակարգերում մշակված չափորոշիչների կիրառման, «Հայագիտական համակարգե տեղեկատվական ծրագրային ապահովման համակարգում մուտքագրման, մատենագիտության և պատկերագիտության կազմման ու գույքագրման, քարտեզագիտության, կենսագրական նյութերի, ազգագրության և բանահյուսության զարգացման, առանձին երկրների ազգային կենտրոնների հետ կապ հաստատելու, տվյալների փոխլրացման գործընթացը կազմակերպելու, տվյալների օպերատիվ փոխանակման ոլորտում հայկական մշակութային նոր արժեքներ հայտնաբերելու, ուրիշ ազգերի կողմից մշակութային հայտնի արժեքների օգտագործումը նկարագրելու, ինչպես նաև այլ նպատակների ծառայեցրած ու մինչ այժմ անհայտ հայկական մշակութային արժեքներ բացահայտելու միջոցով:

գ) **Զարգացնել հայագիտության ոլորտում ընդգրկված կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունները՝** հայաստանյան և աշխարհասփյուռ հայագիտական, ինչպես նաև հայերի ու Հայաստանի հետ առնչվող գիտական, քաղաքական և այլ ուղղվածություն ունեցող հաստատություններն ու կազմակերպությունները հաշվառելու, դրանց գործառույթների վերլուծության և հստակեցման, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ հայագիտության զարգացման պետական ռազմավարություն մշակելու, հայագիտության բարձիթողի վիճակում գտնվող ոլորտները հստակեցնելու ու դրանց զարգացման, հայագիտական կրթական և գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և պետական հաստատությունների տեղեկացման միջոցով:

դ) **Զարգացնել հայ տպագիր մատենագիտությունը՝** գրքերում, տարեգրքերում, ամսագրերում, թերթերում, հանդեսներում և այլուր տեղ գտած հոդվածների, ակնարկների գրանցման, տպագրության սկզբից մինչև մեր օրերը հայ տպագիր գրքի, զարդարվեստի, փայտափորագիր պատկերների, ինչպես նաև լուսանկարների, լիտո- և լինո-գրաֆիաների ու տպագրական այլ տեխնոլոգիաներով ստացված պատկերների գույքագրման միջոցով:

ե) **Աջակցել հայագիտական գրքերի, ժողովածուների, հանրագիտարանների, տեղեկագրերի, մատենագիտական շարքերի, պարբերականների հրատարակմանը:**

զ) **Աջակցել արևմտահայերենի պահպանման ու զարգացման գործին, նպաստել հայերենի երկու ճյուղերի մերձեցմանը:**

ԳԼՈՒԽ 4.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏԵՐՈՒՄ ՈՒ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

4.1. Արտաքին քաղաքականություն

114. Սփյուռքը յուրօրինակ կամուրջ է Հայաստանի, միջազգային հանրության և այլ պետությունների միջև: Սփյուռքի տարբեր բնույթի կազմակերպությունները զգալիորեն նպաստում են առանձին երկրների հետ Հայաստանի երկկողմ կապերի զարգացմանը, մեր երկրի միջազգային ինտեգրմանը և Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը:
115. Ազատագրական մարտերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կարողացավ պաշտպանել համաժողովրդական հանրաքվեով հայտարարված իր անկախությունն Ադրբեջանից, ձևավորեց պետականության հիմքերն ու անվտանգության երաշխիքները և կառուցում է համամարդկային արժեքների վրա խարսխված ժողովրդավարական պետություն: Սակայն, մինչ օրս ԼՂՀ-ի կարգավիճակը միջազգայնորեն ճանաչված չէ, ԼՂՀ-ի տնտեսության մեջ արտաքին ներդրումները մնում են սահմանափակ, իսկ հայ-ադրբեջանական չլուծված հակամարտության պայմաններում օրակարգային է մնում ԼՂՀ-ի բնակչության անվտանգության ապահովման հիմնախնդիրը:
116. ԼՂՀ-ի հակամարտության կարգավորման ուղղությամբ Հայաստան-Սփյուռք գործակցությունը նպաստում է ԼՂՀ-ի բնակչության անվտանգության ապահովմանը, ԼՂՀ-ի պետականության զարգացմանը, ԼՂՀ-ի կարգավիճակը հավաստող փաստերի և փաստաթղթերի ամրագրմանը, այն միջազգային հանրությանը ներկայացնելուն, բանակցությունների միջոցով հակամարտության խաղաղ ու արդարացի կարգավորմանը, Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը, միջազգային երկխոսության և անդրսահմանային համագործակցության ծավալմանը, ռազմական ճանապարհով ԼՂՀ-ի հիմնախնդրի լուծման բացառմանը:
117. ԼՂՀ-ի հակամարտության կարգավորման ուղղությամբ Հայաստան-Սփյուռք գործակցության հիմքում ընկած ելակետային սկզբունքներն են. ա) վերջնական ցանկացած համաձայնություն կամ փաստաթուղթ պետք է ստանա նաև ԼՂՀ-ի բնակչության հավանությունը, բ) պետք է ընդունելի համարվի կարգավորման այն տարբերակը, որն ուղղված կլինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի անկախ գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն, գ) Լեռնային Ղարաբաղը պետք է ցամաքային կապ ունենա Հայաստանի հետ, իսկ անվտանգությունը երաշխավորված լինի միջազգային հանրության կողմից:
118. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը պետք է ճանաչվի միջազգային հանրության, այդ թվում՝ Թուրքիայի կողմից:
119. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում մեծ ավանդ ունեն Սփյուռքի կազմակերպությունները և լոբբիստական միավորումները: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են բազմաթիվ պետություններ և միջազգային կազմակերպություններ: Շատ երկրներում արտաքին քաղաքական շահերով պայմանավորված սահմանափակումների պարագայում անգամ ընթանում է Հայոց ցեղասպանության ճանաչման քննարկման գործընթացը:
120. Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստան-Սփյուռք գործակցության գերակա ուղղություններն են. նպաստել ԼՂՀ-ի հակամարտության խաղաղ և արդարացի կարգավորմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, հակահայկական

դրսևորումների կանխարգելմանը, ժողովրդական դիվանագիտության ընդլայնմանը: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) **նպաստել ԼՂՀ-ի հակամարտության խաղաղ և արդարացի կարգավորմանը՝** ՀՀ արտաքին քաղաքականության և Սփյուռքի քաղաքական ներուժի ներդաշնակեցման, Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի ջանքերի միավորման, հայագիտության ու այլ բնագավառներում Սփյուռքի ակադեմիական ներուժի արդյունավետ ներգրավման, ԼՂՀ-ի տնտեսության մեջ արտաքին ներդրումներին նպաստելու, հայրենադարձությունը խթանելու, ԼՂՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական ծրագրերի ֆինանսական միջոցների ապահովման, առանձին ոլորտներում Հայաստանի և Սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավման, խթանման, ԼՂՀ-ում միջազգային տարատեսակ համաժողովների և այլ ձեռնարկների կազմակերպմանն աջակցելու միջոցով:

բ) **նպաստել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը՝** Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի առանձին հատվածների ջանքերի համատեղման, Հայաստանի արտաքին քաղաքականության և Սփյուռքի ներուժի համադրման, ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող ակադեմիական հաստատություններին և հետազոտական կենտրոններին զարգացմանն աջակցելու, գիտնականների և հետազոտողների սահուն սերնդափոխությունն ապահովելու, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հանրամատչելի միջոցների կիրառման, միջազգային ճանաչման գործում Սփյուռքը ներկայացնող միասնական լեզվով, հեղինակավոր և ներկայացուցչական կառույցի ձևավորման, մշակութային ցեղասպանության դեմ միջազգային գործիքների արդյունավետ կիրառման միջոցով:

4.2. Համայնքների գործակցություն

121. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունը կարևորում է Հայաստանում և ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների և օտար պետություններում հայկական համայնքների միջև բարեկամական երկկողմ հարաբերություններն ու համագործակցությունն անմիջական կապերով, այդ թվում՝ համայնքային և հասարակական կառույցների կողմից օտար պետությունում հայկական համայնքների հետ ուղղակի պայմանագրերի կնքման, քույր քաղաքների պայմանագրերի շրջանակներում ծրագրերի, ինչպես նաև «Համայնքը՝ համայնքինե միջազգային շարժման միջոցով: ՀՀ կառավարությունը կարևորում է համայնքների ինքնակազմակերպման աստիճանի բարձրացումը, նրանց օգնությամբ Հայաստանի միջազգային ինտեգրմանն աջակցումը, կրթության, տնտեսության և մշակույթի բնագավառներում փոխգործակցության հնարավորությունների ուսումնասիրությունն ու դրա վրա հիմնված փոխշահավետ համագործակցությունը, ինչպես նաև տնտեսության, մշակույթի, առողջապահության, գիտության, կրթության, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում փորձի փոխանակման փոխշահավետ գործընթացը:

122. Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում կարևորվում է մարզերի քույր քաղաքների միջև գործող պայմանագրերի շրջանակներում երկկողմ կապերի հաստատումը և համագործակցության խորացումը հայ համայնքների օգնությամբ, ինչպես նաև համայնքի խնդիրների բացահայտումն ու դրանց կարիքների վերաբերյալ կանոնավոր տեղեկատվության ապահովումը: ՀՀ կառավարությունն աջակցում է Հայաստանի Հանրապետության մարզային իշխանությունների, քաղաքային, թաղային ու գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում կրթության, մշակույթի, սպորտի և տնտեսության բնագավառներում Հայաստանի և Սփյուռքի համայնքների միջև փորձի փոխանակմանը,

զբոսաշրջության զարգացմանը, այդ թվում՝ ընտանեկան զբոսաշրջության և ագրոտուրիզմի, համայնքի բնակիչների ընտանիքներում հայ երիտասարդ ընտանիքների կարճաժամկետ բնակության փոխանակմանը, կոնկրետ շփումներին նպաստող այլ նախաձեռնություններին: Ընդ որում, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության շրջանակներում պետական առանձին գործառույթները համայնքին պատվիրակելու պարագայում ՀՀ կառավարությունը կարևորում է պատվիրակված լիազորությունների լիարժեք ֆինանսավորումը պետության և շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

123. Սփյուռքի առավել կազմակերպման գործում տվյալ համայնքի ներկայացուցիչների ներդրումը բացահայտելը, լայնորեն լուսաբանելն ու տարբեր ձևաչափերով ներկայացնելը մեծապես կնպաստի նրանց խնդիրների լուծման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում աշխարհի հայ համայնքների գործակցությանը մեծապես կնպաստի տեղեկատվության հոսքերի ակտիվացումն ու կազմակերպումը:

124. Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում գործակցության ուղղություններն են՝ հայկական համայնքների միջև անմիջական կապերի միջոցով բարեկամական երկկողմ հարաբերությունների և համագործակցության հաստատումն ու զարգացումը, ինչպես նաև «Համայնքը՝ համայնքին է միջազգային շարժման խրախուսումն ու իրականացումը: Նշված ուղղությամբ հիմնական խնդիրներն են.

ա) **աջակցել Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի համայնքների միջև անմիջական երկկողմ կապերի ու համագործակցության հաստատմանն ու զարգացմանը**՝ քույր քաղաքների միջև գործող պայմանագրերի շրջանակներում երկկողմ կապերի զարգացման, տնտեսության, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում հայ համայնքների միջև շփումների ակտիվացման, փորձի փոխանակման, զբոսաշրջության, այդ թվում՝ ընտանեկան զբոսաշրջության և ագրոտուրիզմի, հայաբնակ համայնքների զարգացման գործում հայերի ներդրումը բացահայտելու և ներկայացնելու, Սփյուռքի համայնքների հյուրընկալող երկրների գործադիր և օրենսդիր մարմինների հայ ներկայացուցիչներին Հայաստանին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրերում ընդգրկելու, քույր քաղաքների ռեեստր ստեղծելու, քաղաքական ներկայացվածության ռեեստրի ստեղծելու, հայաբնակ քաղաքների և Հայաստանի քաղաքային համայնքների միջև նոր քույր-քաղաքների ինստիտուտի ձևավորման ու պայմանագրային հարաբերությունների հաստատմանն աջակցելու միջոցով:

բ) **նպաստել «Համայնքը՝ համայնքին է միջազգային շարժման զարգացմանը**՝ միջազգային համապատասխան կառույցներում Հայաստանի համայնքների մասնակցության ընդլայնման, համայնքների միջև միջազգային համագործակցության շրջանակներում Սփյուռքի համայնքների, հայկական պատմամշակութային արժեքների և հուշարձանների պահպանությանն ու փորձի փոխանակմանն աջակցելու, Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի կառույցների ղեկավարների ու ավագանու անդամների մասնակցությամբ Տեղական ինքնակառավարման մարմինների համահայկական համաժողովի ստեղծմանը նպաստելու և դրա գործունեությանն աջակցելու միջոցով:

4.3. Գործարար հատված

125. Համաշխարհայինացման արդի պայմաններում պետությունները մրցում են ոչ միայն շուկաների համար, այլև իրենց ազգային տնտեսության զարգացման գործընթացում սփյուռքի առավել արդյունավետ ներգրավման համար: Այս առումով, Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում կարևորվում է երկու հիմնական ուղղություն. Սփյուռքի գործուն մասնակցությունը Հայաստանի տնտեսության մեջ և հայ գործարարների երկկողմ ու

բազմակողմ վստահելի և շահավետ համագործակցությունը համաշխարհային տնտեսության մեջ:

- 126.** Հայաստանի տնտեսության մեջ Սփյուռքի գործուն մասնակցության առումով կարևորվում է Սփյուռքի գործարարների ու մասնագետների ներգրավումը Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման և Հայաստանի տնտեսությունում արդի գիտելիքների, հմտությունների, գործարար կապերի ներդրման ու գործարար մշակույթի ձևավորման գործում: Հայ գործարարների համագործակցության առումով կարևորվում է տարբեր պետությունների հայ գործարարների գործունեությունը Հայաստանում և արտերկրում, այդ թվում՝ համահայկական մասնագիտական միավորումների և կառույցների ու ներդրումային համահայկական ծրագրերի միջոցով:
- 127.** Սփյուռքի ներդրումային գործունեությունը մեծապես նպաստում է Հայաստանի տնտեսության զարգացմանը շինարարության, ֆինանսական ծառայությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության ու ադամանդագործության, զբոսաշրջության և հյուրանոցային ծառայությունների, առողջապահական ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ու սննդարդյունաբերության, թեթև արդյունաբերության, մանրածախ և մեծածախ առևտրի, ժամանցի կազմակերպման, արդյունաբերական արտադրության, գործիքաշինության, ուղևորափոխադրման, հրատարակչական և տպագրական ծառայությունների, իրավաբանական ու խորհրդատվական ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններում ընդհանրապես: Այդուհանդերձ, Հայաստանում սփյուռքահայերի ներդրումային գործունեության ներուժը շատ ավելի մեծ է:
- 128.** Հայ գործարարները զգալի ավանդ և կշիռ ունեն համաշխարհային տնտեսության որոշ ոլորտներում: Միաժամանակ, համահայկական մասնագիտական ճյուղային կազմակերպությունների թիվը, ինչպես նաև տարբեր երկրների սփյուռքահայ գործարարների համագործակցությունը Հայաստանում և արտերկրում մնում է սահմանափակ: Դեռևս ստեղծված չեն ներդրումային համահայկական խոշոր հիմնադրամներ:
- 129.** Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման գործում Սփյուռքի մասնակցությունը մեծապես պայմանավորված է երկրում գործարար միջավայրի և պետական արդյունավետ կառավարման գործոններով: Գործարարությամբ զբաղվելու ցուցանիշով Հայաստանը **2008** թ. **178** երկրների շարքում զբաղեցրել է **39**-րդ տեղը՝ լավագույններից մեկն արևելաեվրոպական և ԱՊՀ երկրների շարքում՝ (նախորդ տարվա համեմատ բարձրացնելով իր վարկանիշը **46**-ից): Այդուհանդերձ, գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց:
- 130.** ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներն ամրագրում են գործարար միջավայրի բարելավման անհրաժեշտությունը: ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում Հայաստանը գործարար և ներդրումային միջավայրի «զերազանցության կենտրոնե դարձնելու» տարածաշրջանում լավագույն վայրը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, բիզնես սկսելու և զարգացնելու համար: Մասնավորապես, միջազգային մակարդակով մրցունակ գործարար ու առևտրային պայմանների ապահովման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման պետական քաղաքականությունը Հայաստանում ներկայումս ուղղված է տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, հարկային և մաքսային՝ ֆիսկալ հավասարակշռված քաղաքականության իրականացմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը և միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագետների պատրաստմանը: Կարևորվում է միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգի ձևավորումը՝ Սփյուռքի ներգրավմամբ կատարվող ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար:

- 131.** Երկրում գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների զարգացումը արտադրողականության համընդհանուր աճի և գիտելիքահենք տնտեսության կայացման նախապայամանն է: Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները, գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթացի մեծացումը՝ Հայաստանի կառավարությունը քայլեր է ձեռնարկվում էապես վերափոփոխելու երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը, որում աստիճանաբար պետք է նվազեն բնական ռեսուրսների, էժան աշխատուժի առկայության դերը և որոշիչ դառնան բարձրորակ մասնագետները, գիտահետազոտական կառույցները, ենթակառույցների զարգացվածությունը: ՀՀ Կառավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմանն ու դրանց լայնածավալ կիրառմանը: Ներկայումս դրանք երկրի մրցակցային առավելությունների բարելավման ռազմավարական ուղղություններն են: Այս առումով Սփյուռքը գիտելիքի և հմտությունների կարևորագույն աղբյուր է:
- 132.** Սփյուռքի գործարարների և մասնագետների փորձն ու մտավոր ներուժը Հայաստանի տնտեսության զարգացման, ներդրումների և արտահանման խթանման մրցակցային բացառիկ առավելությունն է: Հետևաբար, կարևորվում է Սփյուռքի ներուժի օգտագործումը գիտելիքի փոխանցման ու ներքին կարողությունների զարգացման, տեղեկատվական և մարքետինգային, ինչպես նաև ֆինանսական ներուժի ավելացման, զարգացման հետազոտությունների ընդլայնման և ժամանակակից կրթական համակարգի ձևավորման հարցերում, մասնավորապես, խորհրդատվության, փորձագիտական գնահատման և ուղղորդման միջոցով: Հատկապես կարևորվում է Սփյուռքի գործարարների ու մասնագետների առավել ակտիվ ներգրավումը կրթական ոլորտի զարգացման, Հայաստանի գործարար ոլորտում արդի գիտելիքների և հմտությունների ներդրման ու գործարար մշակույթի ձևավորման գործընթացներում: Հրատապ է նաև գործարարների, ինչպես նաև գործարարների ու պետության միջև շփումների արդի մշակույթի ձևավորման գործում Սփյուռքի կուտակած փորձի կիրառումը Հայաստանում՝ երկրում ազնիվ ու առողջ գործարարության զարգացման նպատակով:
- 133.** Հայաստանի տնտեսության կառուցվածքում բարձրարժեք և գիտատար ծառայությունների ընդլայնումը, մասնավորապես, ենթադրում է ֆինանսական, խորհրդատվական, բժշկական և զբոսաշրջային միջազգային մակարդակով մրցունակ ծառայությունների զարգացում: **2008թ.** ՀՀ կառավարությունը նշված ոլորտներում հետևողականորեն իրականացնում է համազգային մի շարք ծրագրեր, այդ թվում՝ «Հայաստանը կազմակերպված հանգստի գոտի է համազգային ծրագիրը: Մշակվել է զարգացման ներուժ ունեցող բարձրարժեք ծառայությունների զարգացման պետական քաղաքականությունը, այդ թվում՝ Զբոսաշրջության զարգացման և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հայեցակարգերը: Պետություն-մասնավոր հատված-Սփյուռք համագործակցության արդյունքում էականորեն զարգացել է զբոսաշրջության բնագավառը, զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, միջազգային նոր չափանիշներին համապատասխանող օդանավակայան, հյուրանոցային տնտեսության, սննդի ու ժամանցի օբյեկտներ, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Օրակարգային է Սփյուռքի գործարարների և նրանց կապերի ներգրավումը զբոսաշրջային ենթակառուցվածքների, այդ թվում՝ հյուրանոցային ցանցի զարգացման ու արդյունավետ օգտագործման գործում:
- 134.** ՀՀ կառավարությունը որդեգրել է Հայաստանը արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգ ունեցող երկիր դարձնելու քաղաքականություն: Նման քաղաքականության արդյունավետ իրականացմանը մեծապես կնպաստի կառավարման ժամանակակից մոդելների, ինովացիոն (նորարարական) արդյունքի կիրառման համակարգերի ներդրման գործում Սփյուռքի կուտակած փորձի և գիտելիքի ներգրավումը, ինչը կնպաստի մրցունակ տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմանը, մարդկային կապիտալի

շարունակական զարգացմանը, միջազգային չափանիշներին համապատասխան ապրանքների թողարկմանը, ինչպես նաև նոր արտաքին շուկաների ընդլայնմանը: Հատկանշական է, որ արտաքին շուկաներ մուտք գործելու և համաշխարհային փորձին իրազեկ լինելու առումով Սփյուռքը Հայաստանի մրցակցային կարևորագույն առավելություններից է:

- 135.** Սփյուռքի ներուժն ու մարդկային կապիտալը կարող են էականորեն նպաստել Հայաստանում արտադրական հզորությունների սերնդափոխությանն ու արդիականացմանը, մասնավորապես, առկա հիդրոպոտենցիալի օգտագործման արդյունավետության բարձրացմանը և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծմանն ուղղված հետազոտություններին: ՀՀ կառավարությունը խթանում է Սփյուռքի գործարարների ներդրումներն այն բնագավառներում, որտեղ դրանք կարող են հանգեցնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանը: Կարևորվում է նաև Սփյուռքի մարդկային ու ֆինանսական ներուժի ներգրավումը Հայաստանի օգտակար հանածոների և բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության ու արդյունավետ օգտագործման գործում: Քաղաքաշինության ոլորտում ՀՀ կառավարությունը շարունակում է խրախուսել Սփյուռքի գործարարների մասնակցությունը բնակարանաշինությանը, կրթության ու մշակույթի օջախների, մարզական, առողջապահական և սոցիալական նշանակության օբյեկտների կառուցմանն ու հիմնանորոգմանը, այդ թվում՝ համատեղ ծրագրերի իրականացման համաֆինանսավորման եղանակով:
- 136.** ՀՀ կառավարությունը կարևորում է Սփյուռքի ակտիվ մասնակցությունը երկրի արտաքին տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման գործում, ինչպես նաև Հայաստանի առևտրային ներկայացուցչությունների ինստիտուտի գործունեությունն արտերկրում: Համաշխարհային տնտեսության մեջ հայկական ներուժի լիարժեք իրացման և զարգացման նպատակով արդիական է Համահայկական համաշխարհային ներդրումային հիմնադրամի ստեղծումը: Կարևորվում է նաև Հիմնադրամի գործունեության ծավալման նպատակով ՀՀ կողմից պետական երաշխիքների տրամադրումը Հիմնադրամի կողմից հաստատված ներդրումային ծրագրերին: ՀՀ կառավարությունը կարևորում է նաև Համահայկական բանկի ստեղծումը՝ ոչ միայն Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի, այլև ազգությամբ ոչ հայերի ֆինանսական կապիտալի ներգրավման և դրա արդյունավետ կառավարման միջոցով ներդրումային ազգային և համաշխարհային ենթակառուցվածքների զարգացման նպատակով, Հայաստանում, ԼՂՀ-ում և օտար երկրներում ՀՀ քաղաքացիների ու հայերի հեղինակային և գույքային իրավունքների, նաև մտավոր սեփականության հուսալի ու արդյունավետ պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:
- 137.** ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի գործարար հատվածի գործուն մասնակցությունը Ջավախքի տնտեսության զարգացման գործում: Գործազրկությունը Ջավախքի ամենասուր հիմնախնդիրներից է և տեղի հայերի զանգվածային արտագաղթի պատճառը: «Հազարամյակի մարտահրավերներե ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ջավախքի հիմնական ճանապարհների վերանորոգումը, ինչը զգալիորեն կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը: Վրաստանում կառավարման արդյունավետության և գործարար միջավայրի մակարդակը մի շարք ցուցանիշներով համեմատելի է Հայաստանի հետ, ինչը լրացուցիչ խթան է Ջավախքում ներդրումների համար: ՀՀ կառավարությունը նախատեսում է Վրաստանի կառավարության հետ Ջավախքում կազմակերպել գործարար համաժողով՝ ուղղված Ջավախքում ներդրումների խթանմանը, ինչպես նաև Ջավախքում Վրաստանի, Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի գործարարների համագործակցության խթանմանը:
- 138.** Գործարար հատվածում Հայաստան-Սփյուռք գործակցության գերակա ուղղություններն են. Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներին, գործարար ոլորտում արդի գիտելիքների, հմտությունների ներդրման, գործարար կապերի ներգրավման և գործարար մշակույթի ձևավորման գործում Սփյուռքի գործարարների մասնակցության ընդլայնումը, ինչպես նաև Հայաստանի ու Սփյուռքի գործարարների երկկողմ և բազմակողմ վստահելի ու

շահավետ համագործակցության ընդլայնումը համաշխարհային տնտեսության մեջ: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) **Իրականացնել Սփյուռքի համար ընկալելի տնտեսական քաղաքականություն՝** Սփյուռքի գործարար հատվածի հետ ինստիտուցիոնալ համագործակցության և հետադարձ կապի ամրապնդման, տնտեսության տարբեր հատվածների ներուժի գնահատման ու դրանց արտադրական կարողությունների ընդլայնման Սփյուռքի գործարարների և, մասնագետների ներգրավման, համահայկական կառույցների և Սփյուռքի կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ու ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների ներդաշնակության ապահովման, Սփյուռքի մասնակցությամբ զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման այլընտրանքային ուղիները գնահատելու, նոր տեխնոլոգիաների, աշխատուժի և կապիտալի նկատմամբ պահանջարկը բացահայտելու ու դրա բավարարման գործում Սփյուռքի դերը խթանելու, երկրի տնտեսական կայուն զարգացման տեսլականի շուրջ Հայաստանում և Սփյուռքում համաձայնության ու լավատեսության մթնոլորտ ձևավորելու միջոցով:

բ) **Ընդլայնել Սփյուռքի ներուժի ներգրավումը գործարարության ոլորտում արդի գիտելիքների և հմտությունների, կառավարման ժամանակակից մոդելների նորարարական արդյունքի կիրառման, համակարգերի ներդրման ու գործարար մշակույթի ձևավորման հարցում.** զարգացման և համաշխարհային տնտեսությանը ինտեգրման ուղիների և տեմպերի գնահատման ու դրանց համապատասխան նոր տեխնոլոգիաների, աշխատուժի և կապիտալի նկատմամբ պահանջարկի բացահայտման գործում Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման, տնտեսության մեջ նորարարական արդյունքի կիրառման ընդլայնման, գիտության առևտրայնացմանը և գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը Սփյուռքի ներուժի ներգրավման, Սփյուռքում առկա նոր տեխնոլոգիաների, կառավարման հմտությունների և նորարարությունների ներգրավման, գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորմանը Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ համագործակցությունը խորացնելու, Սփյուռքի գործարարների ներգրավմամբ վենչուրային հիմնադրամներ ստեղծելու, տեղեկատվական հասարակության ձևավորման, հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ընդլայնման ու նորագույն տեխնոլոգիաների զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների և հարակից մասնագիտական կրթական համակարգի զարգացմանը Սփյուռքի գործարարների ու մասնագետների մասնակցությունն ընդլայնելու, տնտեսության ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը խրախուսելու, տնտեսություն-գիտություն, գիտություն-համալսարաններ կապերի ընդլայնումը խրախուսելու, քիզնես դպրոցների ձևավորման և դրանցում ուսումնական արդի ծրագրերի իրականացմանը Սփյուռքի գործարարների ու մասնագետների ներգրավման, մասնագիտական և լրացուցիչ կրթության ոլորտում հեռավար ուսուցման համակարգի ներդրման գործընթացներում Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման, միջազգային լավագույն փորձին համապատասխան կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորման ու գործարարական էթիկայի կանոնների և չափանիշների ներդրմանը Սփյուռքի գործարարների ու մասնագետների ներգրավման միջոցով:

գ) **Ձևավորել բարենպաստ գործարար միջավայր և հետևողականորեն բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը՝** գործարարությունը կարգավորող օրենսդրական կայունության և պարզության ապահովման, ներդրումների լիարժեք պաշտպանությունը երաշխավորելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պետական կարգավորումների պարզեցման, գործարարության պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրման, մասնավոր հատված-

պետությունն փոխշահավետ համագործակցության մեխանիզմների ներդրման, մասնավոր սեփականության իրավական պատշաճ պաշտպանության, գործարարությունը խթանող ու ենթակառուցվածքների արդյունավետության ապահովման, էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման, հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներն ամբողջությամբ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ֆինանսական ծառայությունների ոլորտում սպառողների շահերի պաշտպանության գործուն համակարգի ներդրման, ապահովագրական և վարկային ոլորտներում օրենսդրության կատարելագործման և ենթակառուցվածքների զարգացման, ֆինանսական անկանխիկ գործարքների խրախուսման, հիփոթեքային առաջնային և երկրորդային շուկաների զարգացման, արժեթղթերի շուկայի աշխուժացման, հարկային և մաքսային վարչարարության հետևողական բարելավման և հարկային ու մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների բարելավման, հարկ վճարողների շահերի պաշտպանության և ապաստարկման որակի բարձրացման, հարկերի ինքնագնահատման համակարգի արմատավորման և հարկային հաշվետվությունների էլեկտրոնային կամ փոստով ընդունման համակարգին անցում կատարելու, փոքր և միջին բիզնեսի համար հարկման հատուկ ռեժիմներ սահմանելու, հարկային ընտրողական ստուգումների պրակտիկան ներդնելու, Հայաստանում ներդրումային հիմնադրամների գործունեությունը կարգավորելու և միջազգային բորսայական գործունեության համար պատշաճ պայմաններ ապահովելու, միջպետական և ներպետական տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման, ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացման, միջազգային չափանիշներին համապատասխան ուղևորների իրավական պաշտպանվածության ապահովման, միջազգային չափանիշներին համապատասխան հեղինակային և գույքային իրավունքների պաշտպանության համակարգի ներդրման, մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պաշտպանության համակարգի կատարելագործման, կոռուպցիայի դեմ հետևողական պայքարի միջոցով:

դ) **Ընդլայնել Սփյուռքի ներուժի ներգրավումը բարձրարժեք և գիտատար ծառայությունների զարգացման գործում՝** զարգացման ներուժ ունեցող ծառայությունների, գերակա տեսակներ և նպատակային շուկաների բացահայտմանը, կապիտալի շուկայի զարգացմանը, միջազգային մակարդակով մրցունակ ֆինանսական միջնորդությունների ընդլայնմանն ու բժշկական յուրահատուկ ծառայությունների զարգացմանը Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման միջոցով, Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, ձևավորելու և միջազգային շուկայում պատշաճ ներկայացնելու գործում նկարագիրը Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման, ակնագործության ու ոսկեգործության բնագավառների և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը Սփյուռքի գործարարների և մասնագետների ներգրավման, միջազգային ճանաչում ու առաջատար կառավարման հմտություններ ունեցող, տեխնոլոգիաներ տարածող Սփյուռքի գործարարների և մասնագետների մուտքը Հայաստան քաջալերելու, ներքին պաշարների վերամշակման ու օտարերկրյա ներդրումների հետ կապված մրցունակ արտադրություններում Սփյուռքի գործարարների ներուժը ներգրավելու միջոցով:

ե) Վերոհիշյալ նպատակների իրագործմանը մեծապես կարող են օգնել հայ գործարարների միությունները, ինչպես նաև համահայկական ընկերակցության հիմնումը:

4.4. Հոգևոր կյանք

139. Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունն ու օրենքներն ամրագրում են խղճի և դավանանքի ազատությունն ու սահմանում են Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների կարգավորման

սկզբունքները, ամրագրում են նրա որպես ազգային եկեղեցու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման գործում: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, պաշտպանությունը Հայաստանում և այլ երկրներում՝ միջազգային իրավական նորմերին համապատասխան:

- 140. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի պետության իրականացրած բարեխնամ գործունեության արդյունքում Սփյուռքի տարբեր գաղթօջախներում հիմնվել կամ վերակառուցվել են հայկական եկեղեցիներ, բացվել են նոր թեմեր, որի արդյունքում բազմաթիվ սփյուռքահայեր հնարավորություն են ստացել հաղորդակցվել հոգևոր արժեքների հետ:
- 141. Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիներն իրենց նպաստն են բերում Սփյուռքում հայապահպանության, համայնքի համախմբման և Հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման ու ամրապնդման գործում:
- 142. Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում կարևորվում են բռնի կրոնափոխ հայերի և նրանց սերունդների հետ տարվող աշխատանքները: Կրոնափոխ հայերի տարբեր խմբերի ուղղությամբ ՀՀ կառավարությունը վարում է հասցեական քաղաքականություն՝ հաշվի առնելով այն միջավայրը և մթնոլորտը, որում նրանք ապրում են: Միջազգային իրավունքի սահմաններում Սփյուռքի համայնքներում իրականացվում են հայագիտական նպատակային ուսումնասիրություններ՝ բացահայտում նաև բռնի կրոնափոխ հայերի լեզվական, մշակութային ընդհանրություններն ու իրողությունները:
- 143. Հայեցակարգում թվարկված բոլոր մարմիններն իրենց գործառույթներով մշակում են ծրագրեր, միջոցառումներ՝ Սփյուռք-Հայրենիք գործակցության զարգացումն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ 5.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՐՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- 143. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերի և Հայաստան-Սփյուռք գործակցության վրա դրանց ազդեցության գնահատման համակարգ: Այդ նպատակով մշակվում է դիտարկման և գնահատման համակարգի հայեցակարգ, մշակվում և ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացվող պահանջները, ինչը հնարավորություն կտա իրատեսական գնահատականներ տալ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման գործընթացին ու հիմք կդառնա գերակա ուղղությունների, խնդիրների և ծրագրերի մեջ շտկումներ ու փոփոխություններ կատարելու համար:
- 144. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության դիտարկման և գնահատման գործընթացներին մասնակցում են և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում ստեղծվող Ազգային խորհրդի կառույցները, որոնք հայության տարբեր հատվածների գնահատականները տրամադրում են Ազգային խորհրդին՝ վարվող քաղաքականության վերանայման, դիտարկման նպատակով:
- 145. ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության դիտարկման և գնահատման գործընթացին Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի կառույցների մասնակցությունը:
- 146. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությամբ սահմանված հիմնական ուղղությունները, նպատակներն ու խնդիրներն անփոփոխ չեն և ենթակա են փոփոխման Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման

քաղաքականության վերանայմամբ՝ հիմք ընդունելով Հայաստանում, ԼՂՀ-ում և Սփյուռքում հիմնական զարգացումներն ու միտումները:

147. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության դիտարկման և գնահատման գերակա ուղղություններն են. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության դիտարկման և գնահատման համակարգի մշակումը, ներդրումը և զարգացումը, արժանահավատ, համադրելի, որակյալ ու ամբողջական տեղեկատվության ապահովման ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումը և զարգացումը, ոչ պետական հատվածի դիտարկման ու գնահատման կարողությունների զարգացումը: Նշված ուղղություններով հիմնական խնդիրներն են.

ա) մշակել, ներդնել և զարգացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության դիտարկման և գնահատման համակարգ՝ նպատակային և գործոնային հենանիշերի, ցուցանիշների և դրանց հանդեպ միասնական պահանջների, տեղեկատվության հոսքերի կառավարման համակարգի, դիտարկման ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և վերլուծության գնահատման մեթոդաբանության, ամփոփման և վերլուծման ընթացակարգերի, ամենամյա թիրախների սահմանման ու ռիսկերի գնահատման սկզբունքների, ընթացակարգերի մշակման և ներդրման միջոցով:

բ) Ստեղծել և զարգացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության վերաբերյալ արժանահավատ, համադրելի, որակյալ և ամբողջական տեղեկատվության ապահովման ինստիտուցիոնալ համակարգ՝ պետական կառավարման համապատասխան մարմիններում դիտարկման և այդ գործընթացի համակարգման ընթացակարգեր ձևավորելու, անհրաժեշտ տեղեկատվական հոսքերը կանոնակարգելու միջոցով, պետական մարմինների անձնակազմերի մասնագիտական դիտարկման և գնահատման կարողությունները զարգացնելու միջոցով:

գ) Ջարգացնել ոչ պետական հատվածի դիտարկման և գնահատման կարողությունները՝ համապատասխան մեթոդաբանության, կարողությունների ձևավորման և զարգացման, համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովման, ոչ պետական հատվածին որակական գնահատումների իրականացման պատվիրակման միջոցով:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները կարող են կյանքի կոչվել միայն՝ դրանց իրագործմանը միտված բնագավառային ծրագրերի, ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումների, համահայկական համակարգված ձեռնարկների և միջոցառումների շնորհիվ՝ Հայաստանի պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և Սփյուռքի կազմակերպությունների, այլ կառույցների համատեղ, ներդաշնակ ու նպատակային աշխատանքի շնորհիվ: